

ՌՈՒՄԻՆՈՅ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ԿԸ ՀԵՐՔԷ



Իվանով և Խարազի

Ռուսիոյ պաշտպանութեան նախարար Սերգեյ Իվանով <հնգշաբթի օր հերքած է, թէ Ռուսիա Իրանի Կիւրդական արհեստագիտութիւն կամ հաւաքական քանդուհի կենքեր հայթայթած է:

Ան կը խօսէր թղթակիցներու, Աթենքի մէջ տեսակցութիւն մը ունենալէ ետք իր յոյս պաշտօնակիցին՝ Եաննոս Փափաստոնիովի հետ:

Իվանով ըսած է, թէ Ռուսիա կը մասնակցի Իրանի մէջ կորիպային ուժանիւթի գործարանի մը կառուցման աշխատանքներուն, աւելցնելով, թէ անկախ միջապային հսկողութեան ենթակա է և կարողութիւնը չունի փլիթոնիում արտադրելու:

«Կուզեմ աւելցնել, որ այս տեսակի կորիպային հնցը ամբողջովին կը համապատասխանէ այն հնցին, զոր Մ. Նահանգներ կ'առաջադրեն <Իւսիսային Քորէայի ծախել>, յայտնած է ան:

Այսուհանդերձ Իվանով խոստովանած է, թէ Ռուսիոյ և Իրանի միջեւ պինդութեամբ գործակցութիւն կ'ույ:

Այս գծով միջապային սահմանափակումներ չկան Իրանի դէմ և «գիտեմք, թէ Իրան նման գործակցութիւն ունի այլ երկիրներու հետ», աւելցուցած է ան:

Իվանով ըսած է, թէ Յունաստան պաշտօնական իր այցելութեան ընթացքին քննարկուած են ապահովութեան, պաշտպանութեան, տնտեսական և ուժանիւթի վերաբերեալ հարցեր, աւելցնելով, որ երկու երկիրները կը քննարկեն միացեալ առաջարկներ՝ ոճիրներու և ահաբեկչութեան դէմ պայքարելու համար:

ԿՈՐԻՉԱՅԻՆ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՍՏԱՅՆՈՒԹԵԱՆ ՅՈՅՍ

Միւս կողմէ, Իրանի արտաքին գործոց նախարար Քամալ Խարազի Մոսկուայի մէջ յոյս յայտնած է, թէ պիտի կարենայ համուզել Ռուսիան, որ յաւելեալ հնցներ աւելցնէ Մոսկուայի կողմէ կառուցուող կորիպային ուժանիւթի գործարանի մը մէջ:

Մոսկուայի և Թեհրանի միջեւ կորիպային մարտի գործակցութիւնը կը վայրացնէ Ուաշինկթընը, որուն Ռուսիոյ հետ յարաբերութիւնները այլապէս բարեխառնուած են:

(ՌՈՅԹԸՐԶ)

ՀՆԴԿԱՍՏԱՆԷՆ ԿՈՉ՝ ՓԱՔԻՍՏԱՆԻ

ՍՐԻՆԱԿԱՐ, 5 (ՌՈՅԹԸՐԶ)։— Հնդկաստան Ուրբաթ օր կոչ ուղղեց Փաքիստանի վերջ տարու իսլամ ծայրայեղականներու մարգովին և Քաշմիրի շրջան ուղարկուածին, վստահեցնելով, որ բախումները աւարտ մը պիտի չունենան, եթէ Փաքիստան չընդունա՞լ կոչին:

Պաշտպանութեան նախարար Ճորճ Ֆերնանտէս կատարեց այս կոչը Քաշմիրի մէջ ապահովութեան կարգ մը պաշտօնատարներու հետ հանդիպում ունենալէ ետք:

«Հնդկական սահմանապահ ուժերը պիտի չհեռան իրենց դիրքերէն մինչեւ որ Փաքիստան վերջ չտայ իսլամ ծայրայեղականներու մարգովին», ըսաւ Ֆերնանտէս:

«Հնդկաստան պատրաստ է վերջ մը գնելու Քաշմիրի մէջ արհեստի բախումներուն, սակայն փաստ մը կ'ըզէ Փաքիստանէն, թէ վերջ պիտի տայ իսլամ ծայրայեղականներու ուղարկուածին դէպի Քաշմիր», նշեց կառավարութեան յայտարարութիւնը:

Նախանցեալ օր Ֆերնանտէս Նիւ Տեյչիէն մեկնած է ծամու և Քաշմիր ստուգելու սահմանակից շրջանները և տեսակցութիւններ ունենալու ապահովութեան հսկող պաշտօնատարներու հետ:

ՄԱՐԳԱՅԻՆ ԻՐԱՒԱՆՅ ՄԱՐԶԸ ԲԱՐԵԼԱԻԵԼՈՒ ՀՄԱՐ

Ե. ՄԻՈՒԹԻՆ ՅԱԲԵԼԵԱԼ ՔԱՅԼԵՐ Կ'ԱԿՆԿԱԼԷ ԱՆԳԱՐԱՅԷՆ

ԱՆԳԱՐԱ, 5 (ՌՈՅԹԸՐԶ)։— Դանիոյ վարչապետ Անտըրս Ֆոն Ռասմուսըն Ուրբաթ օր յայտնած է, թէ Եւրոպական Միութիւնը կ'ակնկալէ, որ Թուրքիա յաւելեալ քայլերու դիմէ՝ մարդկային իրաւանց իր մարզը բարելաւելու համար, անդամակցութեան հարցով բանակցութեանց թուականի մը ճշգրտմէն առաջ:

Անգարա «լոպիլիկ» դիմած է Եւրոպական Միութեան մօտ, որպէսզի 2002ի աւարտէն առաջ՝ Դանիոյ Ե. Միութեան նախագահութեան ժամանակաշրջանին, բանակցութեանց թուական մը ճշգրտելի: Դանիա Սպանիայէն նախագահութիւնը պիտի ստանձնէ այս տարուան երկրորդ կիսուն:

Թուրքիոյ վարչապետ Պիլիքիթ Էնեհիթի հետ տեսակցութեան մը ետք, Ռասմուսըն մամուլի ասուլիսի մը ընթացքին յայտնած է, թէ Թուրքիոյ հետ անդամակցութեան բանակցութիւնները կրնան սկսիլ, «երբ և եթէ» Թուրքիա հասնի քաղաքական անհրաժեշտ փոփոխութիւններու:

«Դանիա առաւելագոյն կարեւորութիւնը կ'ընծայէ մարդկային իրաւունքներուն, ներառեալ՝ փոքրամասնութեանց իրաւունքներուն», ըսած է ան:

Թուրքիա 1999էն ի վեր Ե. Միութեան թեկնածու է, սակայն երկրին 12 միլիոն բնակչութեան հանդէպ անոր վերաբերմունքը և քաղաքական դանդաղ բարեկարգումները անդամակցութեան առնչութեամբ բանակցութիւնները ուղարկուած են:

Թէեւ խորհրդարանը անցեալ տարի տեղի տուած էր Ե. Միութեան բանալի մէկ պահանջին և քրտերէն պիտուներու դէմ արգելքը ջնջած, կառավարական ընկե-

րակցութեան անդամներուն միջեւ անհամաձայնութիւնը արգելակած է օրէնքներու վաւերացումը՝ իրաւական օրէնքները պատշաճեցնելու համար այդ փոփոխութեանց: Քրտերէն եղանակներ և ծաղաղակներ պիտոյ անձեր կը շարունակեն պատժուիլ:

Քրտերէն կրթութիւնը նոյնպէս արգիլուած կը մնայ: Այս տարեկիցքին ոստիկանութիւնը հարկաւոր ուսանողներ և ծնողներ ձերբակալած էր, որովհետեւ անոնք աղերսագիր ներկայացուցած էին արգելքը ջնջելու համար:

Քիւրտիստանի Աշխատակարար կուսակցութիւնը Ուաշինկթընի «ճակատագրական» կազմակերպութիւններու ցանկին վրայ կը գտնուի:

Սակայն Ե. Միութիւնը զայն դուրս պահած է իր սեփական ցանկէն և Թուրքիա կ'ըզէ, թէ քիւրտ ըմբոստները ապահով ապաստաններ կը վայելեն Ե. Միութեան կարգ մը երկիրներու մէջ:

Այսուհանդերձ, Ռասմուսըն յայտնած է, թէ Քոփենհէյկըն ՔԱԿը «ճակագրական» խմբակ մը կը նկատէ:

ՍՈՒՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՎԵՐՋ ՏԱԼՈՒ ՃԻԳԵՐ

ՆԱՅՐՈՊԻ, 5 (ՌՈՅԹԸՐԶ)։— Միջազգային քննիչներ Ուրբաթ օր Սուտան հասան կառավարական ուժերուն և ըմբոստներուն միջեւ պինդութիւնը մը գոյացնելու համար, յայտնեց արեւմուտքի դիւանագէտ մը:

«Հսկողութեան Միջազգային Միաւորի մէկ պատիրակութիւնը նախանցեալ գիշեր հասաւ Նուպա, իսկ պատուիրակութեան աշխատանքներուն վրայ հսկողութիւնը պիտի կատարուի յաջորդող շաբաթներու ընթացքին», ըսաւ դիւանագէտը:

Սուտան 1983էն ի վեր քաղաքացիական պատերազմի մէջ է, որովհետեւ կառավարութեան ընդդիմադիր ըմբոստներ յաւելեալ ապստոյթիւն կը պահանջեն, ինչ որ կը պատճառէ կրօնական և ազգայնական բախումներ, որոնց մինչեւ օրս զոհ գացած են աւելի քան երկու միլիոն հոգի:

Տեղական աղբիւրներ յայտնեցին, որ պինդութիւնը պիտի հսկէ Հսկողութեան Միջազգային Միաւորի մէկ պատուիրակութիւնը, որ կը հաշուէ յիսուն անդամ: Պատուիրակութեան անդամները իրաւասութիւն ունին հակակշիռի տակ առնելու որեւէ օղանաւ, որ մարդասիրական օժանդակութիւններ կամ ռազմական սարքեր կը բերէ:

Վերջին շաբաթներուն ընթացքին ստորագրուած է նաեւ համաձայնագիր մը, որուն հիմամբ քաղաքացիները թիրախ պիտի չըլլան յարձակումներու: Խարթումի մէջ այլ խմբակ մը պիտի հսկէ այս համաձայնագրի գործադրութեան և երկու ամիս ետք պիտի ներկայացրնէ իր տեղեկագիրը:

ԼԻԲԱՆԱՆԷՆ ԻՍՐԱՅԷԼ «ՔԱԹՈՒՇԱ» ԱՐՁԱԿՄԱՆ ՓՈՐՁԵՐ...

Շարունակուած 2րդ էջէն

ՈՍԲԱԿՈՇՈՒՄ

Իսրայէլեան հրետանին երէկ 15 ունիւր արձակեց Շրպայի արաբական վրայ: Իսրայէլեան ուժերը Ռամթայի իրենց դիրքէն գնդացիներով կրակ բացին շրջակայ բլուրներուն և անտաններուն վրայ:

Իսրայէլեան օդուժը երէկ բազմաթիւ թռիչքներ կատարեց իրանական շրջաններու վերէն: Արքուպի և Նապաթիէի վերէն թռիչքներու կողքին, իսրայէլեան օդանաւերը թռիչքներ կատարեցին նաեւ Պեքալայի կարգ մը շրջաններու վերէն:

Բանակի հրամանատարութիւնը յայ-

տարարեց, որ իր ուժերը Սայտայի շրջանին մէջ կրակ բացին Պրն-թըմպէլի, Նապաթիէ և Իքլիմ Թըֆահ շրջաններու վերէն թռիչքներ կատարած երկու իսրայէլեան օդանաւերու վրայ:

Այլ հաղորդագրութեամբ մը բանակը յայտնեց, որ թշնամի օդանաւերը կէսօրէ ետք ժամը 2:30ին վերստին թափանցած են Լիբանանի օդային սահմաններէն ներս և թռիչք կատարած հարաւի վերէն, և թէ Նապաթիէի մէջ բանակային ուժերը հակոդային վերջերէ կրակ բացած են անոնց վրայ:

Իսրայէլեան դիմադրութիւնը իր կարգին հաղորդագրու-

թեամբ մը յայտարարեց, որ իր ուժերը ժամը 12:30ին կրակ բացած են Լիբանանի վերէն թռիչք կատարող իսրայէլեան օդանաւերու վրայ:

● ՀԱՐԱԹԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ մէջ ՄԱԿԻ խաղաղարար ուժերը պատրաստ վիճակի մէջ դրուեցան և բազմապատկեցին «Կապուտ Գիծ»ին վրայ իրենց շրջուն ջոկատներու թիւը, մասնաւոր Ուազպանի, Ապապի, Քֆարշուպա, Շրպայ շրջաններուն մէջ:

Լրատու աղբիւրներու համաձայն, իրանական բանակն ալ հսկողութեան համար շրջուն ջոկատներ բազմապատկած է Հապալայի շրջանին մէջ:

ՄԱՅՐ ԹԱԳՈՒՅԻՆ ԴԻԱԿԸ ՅՈՂԻՆ ՅԱՆՁՆՈՒԵՑԱՒ

ԼՈՆՏՈՆ, 5 (ՌՈՅԹԸՐԶ)։— Բրիտանիոյ մայր թագուհիին մահուան սուգին մասնակից եղան շուրջ 250 հազար սպաններ, երբ անոր թագաւորական դրօշով ծածկուած դագաղը փոխադրուեցաւ Ուեսթմինսթըր:

Բրիտանիոյ նախկին վարչապետ Ուինսթըն Չըրչիլի մահուան արարողութենէն ետք, մայր թագուհիին թաղումը առաջինն է, որուն այսքան մեծ թիւով սպաններ ներկայ կը գտնուին:

Լոնտոնի բոլոր փողոցները լեցուած էին սպաններով, որոնց շարքին կը գտնուէին նաեւ վրօշաւորներ, որոնք իրենց նկարչական գործիքներով կ'ուզէին յիշատակ մը ունենալ պատմական այդ վայրկեաններէն:

Դագաղին վրայ թագուհիին թագէն բացի վետեղուած էր նաեւ ձերմակ ծաղիկներու փունջ մը, որուն վրայ գրուած էր «Իր բարի յիշատակին» և ստորագրուած Լիլիպէթ, մայր թագուհին այդպէս կը կոչէր իր աղջիկը՝ Էլիզապէթ թագուհին:

Իրենց մօր՝ Տիանա իշխանուհիին դագաղին հետեւելէ հինգ տարի ետք, պատանի իշխանուհի Ուիլիամ և Հերի, հետեւեցան մայր թագուհիին դագաղին:

Չարլզ իշխանը, որ մայր թագուհիին ամենասիրելի թոռնիկն է, շատ յուրուած հետեւեցաւ դագաղին: Ան մայր թագուհին որակեց կախարական և անկաշկանդէլի կին մը:

Թագաւորական ընտանիքին 80ամեայ Ֆիլիպ իշխանը առաջնորդեց դագաղին հետեւորդները:

Ան իշխանուհին խախտեց թագաւորական փրօթոգոյրը, երբ հետեւեցաւ իր մեծ մօր դագաղին: Փրօթոգոյրին համաձայն, հանրութեան առջեւ միայն այր մարդիկն են, որ իրաւունք ունին հետեւելու դագաղին:

ԽԱՍԵՆԷԷՆ ԿՈՉ՝ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ

ՔԱՐԻԻՂԻ

ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ՄՄՊԱՐԿՕ՝ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ ԴԷՄ

ԹԵՀՐԱՆ, 5 (ՌՈՅԹԸՐԶ)։— Իրանի գերագոյն ղեկավար այսօրվա Ալի խամենէի կոչ ուղղեց արաբական երկիրներուն մէկ ամսուան համար քարիւղի «խորհրդանշական» ամպարկօ մը հաստատելու արեւմտեան երկիրներուն դէմ, որպէսզի անոնք ճնշումի ենթարկուելով՝ սօրակից չկանգնին Իսրայէլի:

Խամենէի, որ կը խօսէր Ուրբաթ օրուան հաւաքական աղօթքի մը աւարտին արտասանած քարոյզի մը ընթացքին, ըսաւ, որ արաբական պետութիւնները կրնան քարիւղ իբրեւ վէնք գործածել: Անոնք կրնան դադարեցնել քարիւղի արտադրումը այն երկիրներուն, որոնք լաւ կապեր ունին Իսրայէլի հետ, աւելցուց Խամենէի: Իրանցի ղեկավարը դիտել տուաւ, որ արաբներէն չի պահանջուիր մնալուն կերպով դադարեցնելու արտադրումը, այլ կը պահանջուի մէկ ամսուան խորհրդանշական քայլ մը: Խամենէի ըսաւ նաեւ, որ երբ քարիւղի հոսքը կանգ առնէ, Արեւմուտքին գործարաններն ալ կանգ պիտի առնեն՝ ցնցելով ամբողջ աշխարհը:

Խամենէի իր խօսքին մէջ չըսաւ, որ Իրան պիտի ըլլայ նախաձեռնողը՝ դառնալու համար ամպարկոն հաստատող առաջին երկիրը: Արտաքին գործոց նախարար Մոհամէտ Սաթարի երկու օր առաջ ըսած էր, որ այս ձեւի որոշում չի կրնար անհատական ըլլալ: Անկախ պետք է ըլլալ արդիւնքը հաւաքական կեցուածքի մը: Քարիւղ արտադող Քուէյթ և Սէուտական Արաբիա կը մերժեն ամպարկոյի առաջարկը, որ շաբաթակապին ներկայացուած էր Իրաքի կողմէ:


ԵՄԷՆ

ԹՐՔԱԿԱՆ ԴԵՄՊԱՆԱՏԱՆ ՄՕՏ ՊԱՅՅՈՒՄ

ԵՄԷՆԻ մայրաքաղաք Սանաայի մէջ գտնուող թրքական դեսպանատան մօտ պատահած պայթումի մը պատճառով, շէնքին պատուհանները փշրուած են, յայտնեցին պաշտօնատարները: Մարդկային վնաս չկայ:

ԵՄԷՆԻ պաշտօնատարներ նշեցին, որ որեւէ մեկնաբանութիւն պիտի չընեն մինչեւ հետաքննութիւններուն աւարտը: Թուրք դիւանագէտ մը յայտնեց, որ չի հաւատար, թէ պայթումին թիրախը դեսպանատունը եղած է, որովհետեւ պայթումը դեսպանատան անմիջական շրջակայքին մէջ չէ պատահած:

(ՌՈՅԹԸՐԶ)



ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ՆԱՄԱԿԱՆԻ

Յարգելի Խմբագրություն «Ազդակ» օրաթերթի,

Ուրբաթ, 29 Մարտ 2002ի «Ազդակ» օրաթերթի 4րդ էջի նամակահիի գծով, նամակագիրի (Ռ.Մ.) դժգոհություններն ու կատարները փարատելու համար, ստորեւ կը կատարենք կարգ մը ճշդումներ եւ յստակացումներ:

Խօսքը կը վերաբերի Լ. Օ. Խաչի Շրջանային Վարչության դաստիարակչական յանձնախումբին կողմէ կազմակերպուած այն ձեռնարկին, որ կը միտէր Կիներու Միջազգային Օրուն առիթով գնահատելու լիբանանահայ գրագիտուհիներն ու արուեստագիտուհիները:

Առ այդ, հրահրած էինք էլ յօդուհետեւ ան ծանօթ է թէ՛ լիբանանահայ գրողներու եւ թէ կերպարուեստագիտուհիներու շրջանակներուն: Անկախ անկէ, որ էլ յօդուհետեւ ան ծանօթ է թէ՛ Բազմաբնակարանի հայագիտական ամսագիրը, ատենին «Բագին» եւ «Ազդակ» թերթերուն մէջ ստորագրած է թէ՛ բանաստեղծություններ, թէ՛ արձակ էջեր եւ թէ գրական վերլուծական էջեր. ան միւս կողմէ իր գործի բերումով (1997էն իր վեր կը վարէ «Նոս'Ա Արք» արուեստի ցուցասրահի տնօրէնութեան պաշտօնը) կը ձանձնայ լիբանանահայ արուեստագիտուհիներ, որոնք մեծաւ մասամբ տարբեր առիթներով իրենց գործերէն ցուցադրած են նաեւ «Նոս'Ա Արք» ցուցասրահին մէջ: Աւելի'ն. վերջին տարիներուն ան փորձառութիւն ձեռք բերած է նաեւ միջազգային ցուցահանդէսներ կազմակերպելու եւ անոնց մասնակցելու իմաստով:

Փաստօրէն փորձը ցոյց տուաւ մեզի, որ մենք չէինք սխալած դասախօսուիի մեր բնութիւնէն մէջ. ան խղճմտօրէն կատարած էր իր աշխատանքը: Եւ որովհետեւ իր տեսակին մէջ առաջինն էր նման նիւթի մը պատրաստութիւնը՝ աղբիւրներու չգոյութեան պատճառով, անկարելի էր բոլոր արուեստագիտուհիներուն բոլոր գործերը գտնել եւ ուսումնասիրել: Բնական էր որ թերացումներ պիտի ըլլային, ինչպէս կը նշէ դասախօսուիի իր խօսքի վերջաւորութեան. «Շարունակելու համար շարքը գեղանկարչուիներուն, արդար պիտի ըլլար անդադրանալ կարգ մը այլ արժանաւոր անուններու մասին եւս, եւ սակայն նկատի ունենալով մեր խօսքին համար ճշդում չսահմանը պիտի փորձենք թուարկել պատճառ առ ի գնահատանք ու տեղեկութիւն»: «Այսօր մեր կարելիութեան սահմաններուն մէջ փորձեցինք պատկերացում մը տալ գաղութի կերպարուեստագիտուհիներուն եւ գրագիտուհիներուն մասին, հաւանական է որ բացթողումներ եւ վրիպումներ եղան, որոնց համար ներկաներուն ներողամտութիւնը կը հայցենք»:

Բոլոր պարագաներու էլ յօդուհետեւի խօսքը անբողոքութեամբ եւ նոյնութեամբ կը դնենք «Ազդակ» ի խմբագրութեան տրամադրութեան տակ, հրատարակութեան համար, որպէսզի ընթերցողը ինքը դատէ:

Տրուած ըլլալով, որ արուեստն ու գրականութիւնը վիճելի են,

Տրուած ըլլալով, որ կարծիքներու այլապանութիւնը հարատւութիւն է,

Տրուած ըլլալով, որ Ռ.Մ. արուեստի քննադատութեան կամ արուեստի գործերուն արժեւորման մէջ պատրաստութիւն կը թուի ունեցած ըլլալ,

Տրուած ըլլալով, որ «Արուեստի քննադատի արդար իրաւունքն է նախաիրութիւններ ունենալ գնահատելու մէկը եւ թերագնահատելու ուրիշի մը գործը»,

Տրուած ըլլալով, որ լիբանանահայ արուեստագիտներու արժեւորումը կատարող հրատարակութիւնները սակաւաթիւ են հրատարակի վրայ,

Լաւ պիտի ըլլար, որ նամակագիրը իր հերթին ըլլար նախաձեռնողներէն լիբանանահայ գրագիտուհիներու արժեւորումը կատարողներուն՝ հարստացնելով լիբանանահայ մշակոյթի անդամները, անոնց ծանրանալու ակամայ թերացումներուն վրայ:

Լ. Օ. ԽԱՉԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵՂԵԳԻՆԵՐ՝ ՀՈՂԻՎՈՒՑԻ ՄԷՋ

Հոլիվուտի դահլիճներէն մէկուն մէջ, ուր 24 Մարտին տեղի ունեցաւ «Օսքար»-ի մրցանակներու բաշխումը, հնչած են հայկական մեղեգիներ՝ Մոսկուայի Սիմֆոնիք նուագախումբի կատարողութեամբ (Նուագավար՝ Օհան Դուրբեան):

Համերգին մասնակցած է պատանի ջութակահար Սերգէյ Նաչատուրեան:

ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՍԱԿԱԳԻՆԵՐՈՒ ԱՃ

Ըստ պաշտօնական տեղեկութիւններու, Մարտ ամսուան ընթացքին, Փետրուարի համեմատութեամբ, Հայաստանի մէջ արձանագրուած է ծառայութիւններու սակագիներու 0,4 առ հարիւր աճ, որուն մեծապէս նպաստած է կապի ծառայութիւններու սակագիներու 3 առ հարիւր յաւելեալ աճը: Մարտին, նախորդ ամսուան համեմատութեամբ, հեռաձայնային գրոցներու րոպէսվճարի կիրառման իրբեւ արդիւնք 8,7 առ հարիւրով բարձրացած է հեռաձայնի վճարումը:

Նշեալ ժամանակաշրջանին փոխադրման ծախսերուն սակագիները աճած են 0,4 առ հարիւրով: Բժշկական սպասարկութեան կենցաղային, կրթութեան համակարգի եւ հանրային կազմակերպման ծառայութիւններուն մարզին մէջ, սակագիներու յաւելեալ աճը կազմած է 0,1 - 0,5 առ հարիւր: Հանրային սնունդի, մշակոյթի, իրաւական ու դրամատրայի ծառայութիւններու սակագիները նախորդ ամսուան համեմատութեամբ մնացած են անփոփոխ:

ԳԵՏՆԱՆՆՁՈՐԻ ԶՐԻ ՍԵՐՄԱՅՈՒՆՆԵՐԱՇԷՆ ՏՈՒԺԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒ

«Արշալոյսի Դէմ» Միջազգային Հիմնադրամը Միսիսիպի եւ Գորիսի շրջաններու երաշտէն ամէնէն շատ տուած է 45 համայնքներու 2600 գաղթական եւ անապահով ընտանիքներու ձրի տրամադրած է 475 թոն գետնախնձորի սերմացու: Միեւնոյն ժամանակ յատկացուած է նաեւ գետնախնձորի ցանքի համար անհրաժեշտ քանակութեամբ պարարտանիւթ:

Սկստած ծրագիրը մարզին մէջ շարունակական ընդլայնելու: Նախատեսուած է Մայիսին նոյն ընտանիքներուն դարձեալ ձրիօրէն տրամադրել 400 գութի ոչխար:

ՎՐԱՑԱԿԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ՝ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

3 Ապրիլին ետօրեայ այցելութեամբ Երեւան եկաւ Վրաստանի զինուորական սպայակոյտի պետ գործընդերքի Փիրցիալաշվիլիի գլխավորած պատուիրակութիւնը՝ Հայաստանի պաշտպանութեան փոխնախարար գոր. Միքայէլ Յարութիւնեանի հրահրով:

Հայ եւ վրացական ուժերու համամատարներ Յարութիւնեան եւ Փիրցիալաշվիլի քննարկեցին պաշտպանութեան մարզին մէջ Հայ-վրացական գործակցութեան զարգացման վերաբերեալ խնդիրներ: Կողմերը ներկայացուցին իրենց բանակներու կառուցման եւ հաստատման հոլովոյթը՝ ընդգծելով փորձառութեան փոխանակման կարեւորութիւնը:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԷՆՔԵՐՈՒ ՕՐԷՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԵՐՈՒ ԿԱԻՆՏՈՒՄ

Չորեքշաբթի, 3 Ապրիլին, առաջին իսկ ընթերցումով Հայաստանի Ազգային ժողովը վաւերացուց կառավարութեան ներկայացուցած «Բազմաբնակարանային շէնքի կառավարման մասին» ու «Համատիրութեան մասին» օրէնքներու նախագիծերը եւ անոնցմէ բխած փոփոխութիւնները եւ լրացումները կատարեց Հայաստանի քաղաքացիական օրէնսգիրքին մէջ:

Հայաստանի քաղաքացիութեան նախարար Դաւիթ Լոբեանի համաձայն, «Բազմաբնակարանային շէնքի կառավարման մասին» օրէնքով բնակարանային հիմնադրամի շահագործման եւ պահպանման մարզին մէջ ի մասնաւորի կ'առաջարկուի հաւատարմազրային, լիազօրազրային եւ համատիրութիւններու միջոցով կառավարում: Եթէ նախապէս շէնքերու մէջ բնակարան ունեցող տանտէրը կը տնօրինէր միայն իրեն պատկանող տան հարցերը, ներկայիս, այս օրէնքով սեփականութեան իրաւունք կը տրուի քաղաքացիին՝ նաեւ օգտուելու շէնքի նկուղը, ձեռնարկը եւ տանիքը օգտագործելու կարելիութեան: Դաւիթ Լոբեան նաեւ նշեց, որ շէնքերու հիմնադրամը միջին հաշուով կը կազմէ վեց միլիառ տոլար:

ՀԱՅԱՍՏԱՆ-ՌՈՒՍԻԱ ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ՆԵՐՈՒ 10ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ

2 Ապրիլին Արտասահմանեան երկիրներու հետ բարեկամութեան եւ մշակութային կապերու ընկերութեան կեդրոնին մէջ տեղի ունեցած է Հայաստանի եւ Ռուսիոյ միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման 10ամեակին նուիրուած հաւաք մը, որուն ներկայ էին Հայաստանի արտաքին գործոց փոխնախարար Ռուբէն Ծուգարեան, Հայաստանի մէջ Ռուսիոյ դեսպան Անատոլի Տրիւբով, մշակոյթի գործիչներ եւ լրագրողներ:

Կարեւոր նկատելով դիւանագիտական կապերու հաստատման երեւոյթը, Ա. Տրիւբով նշած է, որ անցնող 10 տարուան ընթացքին լուրջ ձեռքբերումներ արձանագրուած են ինչպէս զինուորական, նոյնպէս ալ տնտեսական եւ մշակութային մարզերուն մէջ:

Դեսպան Ա. Տրիւբովի համաձայն, հայ-ռուսական տնտեսական յարաբերութիւններուն մէջ նոյնպէս կը նկատուի զարգացում, որուն մասին կը վկայէ այն փաստը, որ անցեալ տարի երկկողմ առեւտուրի ըրջանութիւնը կազմած է 230 միլիոն տոլար՝ 30 առ հարիւրով աւելի նախորդ տարուան համեմատութեամբ: Միւս կողմէ, Հայաստանի եւ Ռուսիոյ միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման 10ամեակի կապակցութեամբ, Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանով շնորհակտրական ուղերձ մը յղած է Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանին:

ԺԸՆԵԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԻՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ՄԱՐԶԵՐՈՎ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան Շաբաթ, 31 Մարտին տեսակցութիւն մը ունեցած է աշխատանքային այցելութեամբ մը Հայաստան գտնուող Ժընեի կառավարութեան անդամ եւ տնտեսութեան, աշխատանքի եւ արտաքին գործոց նախարար Քարլո Լապրէշի հետ:

Հանդիպման ընթացքին քննարկուած են Ժընեի կառավարութեան կողմէ Հայաստանի եւ մասնաւորապէս Երեւանի մարզին մէջ իրականացուող ծրագիրներուն ընթացքը եւ նախատեսուող աշխատանքներուն անհրաժեշտութիւնը:

Ք. Լապրէշի նշած է, որ Ժընեի կառավարութիւնը որոշ հետաքրքրութիւն մը ունի կրթական եւ տեղեկատուական մարզերուն մէջ նոր ծրագիրներ առաջարկելու հարցով. ծրագիրներ, որոնք այցելութեան ընթացքին քննարկուող հիմնական խնդիրները պիտի ըլլան:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հանգանակութեան աւանդուիւն մը չէ, որ կը շարունակուի, տարեկան այս ձեռնարկին ընդմէջէն, այլ շարունակուող եւ երբեք չաւարտող ընկերային - տնտեսական գահավիժող երեւոյթէն մեկնած կարիքի մը հրամայականն է, որ կը պարտադրէ Շրջանային Վարչութեան ղիմել զարծեալ ու զարծեալ իր ժողովուրդի գաւակներուն եւ յիշեցնել անոնց, թէ այս կազմակերպութիւնը կը գոյատեւէ միայն իր ժողովուրդին ներքին ժողովուրդէն ժողովուրդին նշանաբանով, թէ կան հազարաւոր հայրերից բժշկական խնամքի ու զարմանումի ենթակայ, հազարաւոր հիւանդներ մեծօրեայ դեղերով իրենց գոյութիւնը քաշքշող, հազարաւոր հայրերից հացի կարօտ եւ վերջապէս հազարաւոր հայրերից նախնական կրթութեան մը կրթաբոշակը ապահովելու անկարող եւ դեռ անվերջանալի շարանը կարիքի ու դժուարութիւններու, որոնք հետզհետեւ աւելի կը մեծանաւ ու անկարելի կը դառնայ լուծումի մը մէջ ձեւակերպելու ճիգերը:

ԼՕԽԻ հիմնադիրները՝ ծառայութեան եւ նուիրումի առաջին սերմնացանները, 70 տարիներ առաջ ձեռնարկեցին «հանգանակութեան», որ խոր արձագանգ գտաւ ժողովուրդի բոլոր խաւերուն քով եւ որ կը թելադրէր մեր ժողովուրդին, յոյսը դնել ինքն իր վրայ, իր ուժին, իր կարողութեան, իր խելիքին եւ իր հաւատքին վրայ եւ իրաւ ալ 70 տարիներ ժողովուրդի սրտէն բխած զարձաւ Օգնութեան Խաչի հացին թթմորը, որ Յիսուսի բաշխուած հացին նման անսպառ կերպով բաւարարեց եւ կը շարունակէ բաւարարել իր գաւակներու քաղցը: Դժբախտաբար դեպքերը, պայմանները եւ ժամանակները կրկնուող իրագործութիւններու պատճառով կը շարունակեն սպառնալ մեր բարօրութեան վերելքին՝ զարգացման եւ բարգաւաճման կարելիութիւնները միշտ յետաձգելով մօտիկ ապագային:

Այսօր, գրեթէ դար մը վերջ գագացկան նոյն ջերմութեամբ Լիբանանահայ Օգնութեան Խաչը ծառայութեան հաստատակամ յանձնառութեամբ աներբ եւ անվհատ կը շարունակէ հարթել նախապահը նորահաս սերունդներուն համար, որպէսզի անոնք ապրին արժանապատուութեամբ եւ ապրին հպարտօք, եւ այդ ճիգերը կ'արդիւնաւորուին հաւաքական կամքով եւ հաւաքական մտածողութեամբ, որոնք կը դրսեւորուին վեհանձնութեան ու առատաձեռնութեան արուեստին մէջ, իրարօգնութեան, տալու եւ բաշխելու անհնձանկամ ու գեղեցիկ աթոյսով, որու բարոյական պարտաւորութեան յուշարարը կը հանդիսանայ Լիբանանահայ Օգնութեան Խաչը, իր գաւակներուն յուշով « Լիբանանահայ Օգնութեան Խաչի հանգանակութեան օրն է», թող թեւ լուծանքը մուրիքն ու խաւարին մէջ տուայտող հայրերից նուիրումը լոյս ու խնդութիւն բերեն:

Լ. Օ. ԽԱՉԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱՆՍԱ ԱԹԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԻ ՀԻՄՆԱՔԱՐԻ ԶԵՏԵՂՈՒՄ

«Արմենիքիս» կը տեղեկացնէ, թէ Ալմա Աթալի մէջ տեղի ունեցած է «Լոյս» Հայկական Մշակութային կեդրոնի հիմնադրի գետեղման հանդիսաւոր արարողութիւնը: Ղազախստանի հարաւային մայրաքաղաքի շուրջ 4 հազար հաշուող Հայ համայնքը մշակութային այս կեդրոնին տեղեկումը կը նկատէ խորհրդանշանի տեղաբնակ հայերու զարգացման եւ ամրապնդման նոր ժամանակաշրջանին:

Հիմնադրի գետեղման արարողութեան մասնակցներուն մէջ եղած է նաեւ Ղազախստանի մէջ Հայաստանի դեսպան Խոսրոս Խոսրովեան: Իր ելոյթին մէջ Հայաստանի դեսպանը ընդգծած է, որ ուրախալի այս իրագործութիւնը արդիւնքն է Ղազախստանի նախագահի եւ ղեկավարութեան ուշադիր եւ հոգատար վերաբերմունքին:

ՀԱՔԻԿ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՅԷՆ
HAMPIG SASSOUNIAN
CSP - L.A.C. B - 5 - 131 44750
60-TH ST. WEST LANCASTER, CA, 93536 — USA


ՀԻՐԱՆԱՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԽԱՉ
ՄԵՐ ՆՊԱՏՆԵՐԸ ՄԻԱԶՈՒԼՈՒԵԼՈՎ ԿԸ ՀՈՍԻՆ ՆՈՅՆ ՕՃԱԽԻՆ ՄԷՋ, ՈՒՐԿԵ ՊԻՏԻ ԺԱՅԹՔԻ ԱՆԿՈՐԾԱՆԵԼԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԸ:
ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՔԱԹ՝ 7 - 13 ԱՊՐԻԼ



Գրական Էջ

ՍԻՐՏ ՄՐՏԻ ՀԱՅԱՏՐՈՓ ԵՐԳԵՐ

ԲԱՐԻՆ ՈՒ ԳԵՂԵՑԻԿԻՆ ԳԵՂԵՑԿԱԶԱՅՆ ԵՐԿՐՊԱԳՈՒՆ



Աւելի քան վաթսուց տարիներ առաջ, երբ նոր տաղանդներ յայտնաբերեցին բացառիկ կարողութեամբ ու բացաստեղծական շնորհով ի վերուստ օժտեալ Նիկոլ Աղբալեան եւ Վահան Թեքեան կանգ կ'առնէին «Գաղտնի ճամբան» քերթողգիրքով արեւմտահայ բանաստեղծութեան մէջ իր ճամբան բանալի փորձող ժագ Ս. Յակոբեանի անուանին առջեւ, չէին սխալել: Եղիշէ Չարեանցի եւ Լեւոն-Ջաւէն Միւրմէյեանի յայտնագործումը կատարած անուանի քննադատն ու բանաստեղծը, փաստօրէն, իրարմէ անտեղեակ, կը յաջողէին վեր առնել քնարական արժանիքները այս բարակ հատորի էջերուն ձեւաւորած այն քերթողական ծրագիրին, որ Միսաք Մեծարեանցի եւ Վահան Տեքեանի բափանցիկ, գունեղ, կշռութաւոր, բաբախուն եւ առիւնքնող խորհրդապաշտ քնարերգութեան մայրակունքներէն ճամբայ ելլելով հանդերձ կը ձգտէր հիմնել «գաղտնի», այսինքն՝ *անծանօթ* եւ այդ իսկ հանգամանքով նոր ու *ինքնադրոշմ* իր ուղին: Նուրբ, բարձր, գողտրիկ, գրաւիչ ու բազմբանց ապրումները բանաստեղծական սեփական երանգապնակով երգող «գգայութեան նկարիչ» ժագ Ս. Յակոբեանի քերթողական դիմանկարը կարճ ժամանակ մը անց ալ անելի պիտի պայծառանար, երբ 1943ին ու 1946ին ան յաջողաբար լոյս պիտի բնծայէր «Գաղտնի ճամբան» ի վրայ քերթողական նոր նուաճումներ գումարած «Մեղրալուսին» եւ «Մեծրոպաշունչ» խորագրեալ հատորները:

Աւելի քան բնութապաշտ ուրոտներէ հայկական կլիմաներ անցումը յաւելեալ բովանդակութեամբ, աւելի համապարփակ աշխարհահայեացքով, տարբեր շեշտներով եւ մարդկային ու ազգային բոլորովն նոր երանգներով պիտի հարստացնէր գեղապաշտ բանաստեղծին դիմանկարը: Ժագ Ս. Յակոբեանի քերթողութեանը պիտի փայլէր հայատրոփ առնականութեամբ մը, որ հայոց պատմութեան դարաւոր ակունքներուն սրբազան ուխտերով ու սիրանքներուն թելադրանքներով զսպանակաւ՝ գեղեցկօրէն պիտի գոռար իր ազգային արժանապատուութիւնն ու հպարտութիւնը:

Պիտի գոռար յաղթաշեշտ եւ բամբ ու հայատրոփ այս թորգոմեան ձայնը պիտի ոսկիանար տակաւ առ տակաւ, յաջորդ տասնամեակներուն: Հայաշունչն ու հայագոյն հատորները պիտի յաջորդէին իրարու եւ «Մասիսածին» (1963), «Հայատրոփ» (1970), «Հրաշագար» (1978), «Հողաշնչում» (1991) եւ «Հայագոյն» (դարձեալ 1991) անուն քերթողգիրքերուն էջերէն նառագայթող բազմբանց յոյսը պիտի հագուէր նորոգ փայլք ու վերանորոգ հնչեղութիւն՝ քերթումները կշռութաւորած քրիստոնէական հաւատքէ բխած կենսափմաստասիրութեամբ, հոգեկան երանութեամբ, բայց մա նաւանդ հոգեմտաւոր ենթախորքով: Մինչ այդ, սակայն, 1948ին հոգեւոր վերածընունդ մը ապրած բանաստեղծը լայն պիտի բանար ներքին անջրպետը իր քրիստոնէական ներաշխարհին, յաջորդաբար ստորագրելով երկնածին ապրումներու լոյսերով ու կշռութեանը բանունած հոգիի եւ խղիւղի, սիրոյ եւ հաւատքի, բարիի եւ գեղեցիկի քաղցր մատեաններ, որոնք պիտի կոչուէին «Ջահերթ» ու «Յիսուսաւոր»», «Հարսնագնաց երամ» ու «Յիսուսահար»:

Մերը, կեանքը, յանրապետութիւնը, մարդկային ու հոգեւոր մնայուն յոյսերն ու խոհերը, բայց մա նաւանդ հայ ոգին, մեր ազգային արժանապատուութիւնը, Հայոց Պատմութեան ոգեշնչող դրուագներն ու դէմքերը, պաշտելի սրբութիւններն ու գանձերը, մէկ խօսքով՝ Հայաստանը, Հայը եւ Հայ լեզուն յաղթակերպ քուրմի մը իրաւութեամբ ու երջանկութեամբ 65 տարիներ շարունակ հայերգած այս *ամրողական բանաստեղծը* այսօր դարձեալ կը թակէ մեր հոգիին դոճերը: Լուռ ու անշշուկ: Ժագ Ս. Յակոբեան անուն հայ քրիստոնէայ գրողին վայել հեզութեամբ՝ մեզի խոստանալով արեւստի, հաւատքի եւ գեղեցիկի եզակի խնձոր մը:

Բարի ժամանում 85ամեայ լոյսերով ու խոհերով, երգերով ու արօքներով ծանրաբեռն ալեհեր բանաստեղծին եւ բիւր վայելում «մեսորոպածին» խօսքի կարօտ լիբանանահայ գրասէր հասարակութեան:

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ՍՊԱՍԵԻ, ՈՒ ԶԳԱՐ...

Չնաշխարհիկ այն պահուն՝ ուր երանգներ կ'երապեն Պարտէպներուն մէջ խորունկ եւ ջուրերուն թաւշեղէն, Հոգիիս պէս տրոփուն իրիկուան մէջ տրոմաւար Սպասէի, ու չգա՛ր...

Ու ներդաշնակ օրորով թմբիին տակ գարնաբերձ եւ հաշիշով ծանրաբեռն իր շուքերուն թալկահեղձ, Անյայտ ճամբուն հոգեպիշ սպասէի՝ ծածկաբար, Սպասէի, ու չգա՛ր...

Օ՛ կարծէի ես շնչել վարդն եւ խունկն իր վարսերուն, Ծոծրակն ի վար ջրվիժող իր վարսերուն հեւեւուն. Եւ պզայով ջութակի ներկայութիւնն անսպառ՝ Սպասէի, ու չգա՛ր...

Եւ թուելով ինձ լսել իր ձայնին սիւրբ սրինգ, Հարսնեղան իր շառ շղարշին՝ մարմնն ի վար մեղեւիկ, Կապոյտ նուագն ունկնդրել իր քայլերուն տաղաշար, Սպասէի, ու չգա՛ր...

Գինով ու տաք վարդերու ոսկի ճամբուն մէջ յանկարծ, Ո՛հ, կարծէի հեռուն տեսնել ստուերն իր ծաղկած. Չուարթ ու հով իր անունն եւ կանչելով խօյաբար՝ Սպասէի, ու չգա՛ր...

Երապէի ես ըմպել շրթներն իրեն գինելորդ Եւ Մայիսի մը կարօտն առնել մարմնէն մշկահոտ. Եւ այսին դէմ՝ իր սնդուս եւ լոյս շոյանքն հովաշար, Սպասէի, ու չգա՛ր...

Սպասէի, ու չգա՛ր՝ մինչեւ գիշեր, մինչեւ ա՛յգ. Իր տեսիլքով տրոփուն հոգիիս հետ միս-մենակ Թմբիներուն նինչին տակ՝ գաղտագողի՝ ու երկա՛ր Սպասէի, բայց չգա՛ր...

(«Մեղրալուսին» - 1943)

Այլազան է բաւական, իր արտայայտութեան եղանակը, երբեմն նոյնիսկ նոր է ան մեր քերթողութեան մէջ, եւ, ինչ որ ամենամեծ յատկութիւնը կը կազմէ, Պ. Ժագ Ս. Յակոբեան օտարած է երաժշտական զգայարանով, իր քերթուածը ունի հոտուն ու ցայտուն ջուրերուն, սլվլուն հոփին ներդաշնակութիւնը:

ՎԱՀԱՆ ԹԵՔԵԱՆ

(1938)

Ո՛Վ ՀԱՅ, ԽՍՕՒԷ ՀԱՅԵՐԷՆ...

Ո՛Վ Հայ, խօսէ հայերէն՝ շէկ պարթօնքի մինչեւ քուն. Բազմութեան մէջ թէ մինակ, տան թէ ճամբուն շուկայի, Օտարին հետ ու եղբորդ, իբրեւ յարթեզ պանծալի՝ Հպարտութեամբ, բարձրաձայն լոկ հայերէն խօսէ դուն:

Կանաչ բակէն դպրոցի մինչեւ մահիճն լետնագոյն՝ Խօսքը ըլլայ միշտ հայերէն, զի մէն մի բառն հայերէն՝ Օղակ մ'է՛ նոր ու հզօր որով տակաւ կ'երկարի Հայ լեզուի հին բայց անմաշ շղթան ոսկի եւ անհուն...

Բերանացի, գրաւոր, ու մտովին, հոգեւին՝ Միշտ հայերէն խօսէ դուն ի սէ՛ր մեր մեծ Անգեալին, Որ իր հողին տակ ննջող մեր ողջ նախնիքը ցնծան:

Թէ հարկ ըլլայ Աստուծոյ հետ ալ խօսիլ անպայման, Հպարտօրէն՝ ուսկերովդ ու շրթներովդ հողածոյ Խօսէ դարձեալ՝ հայերէն՝ այդ սուրբ լեզուն Աստուծոյ...

(«Մեծրոպաշունչ»-1946)

ՈՒՂԵՐԶ ՀԱՅ ԼԵՌՆԵՐՈՒՆ

Ո՛Վ հայ լեռներ, դարաւոր հպարտութիւնն էք հայկեան, Չոր ո՛չ մէկ տար տիրակալ՝ կամք ու պէնքովն իր համայն Կքէլ երբե՛ք չըկլոցաւ իր կրունկին հաւասար, Ո՛չ ալ դարերը իսպառ ջնջել ձակտէն ձեր մարմար:

Ձեր ձիւնաթափ գագաթներն անշէջ տեսի՛լքն են՝ որուն Դարեր ի վեր կը ձգտի հասնիլ հանձարը հայուն. Դուք մարմնացեալ Գաղափա՛րն էք ոգեղէն հայութեան, Եւ դուք՝ պատճառն ու իմաստն իր աննահանջ մարտման:

Թեւե՛րն էք դուք մայրական, որոնց շուքին մէջ կանաչ՝ Հօտը Հայկի կ'արածի, կ'երգէ կարկաշ առ կարկաշ. Եւ դուք՝ կուռ կո՛ւրծքն հայրական, որ նախնիներն դէմ ոտիկ կը պաշտպանէք հայ ամբարն ու հայ լամբարն արփաշող:

Հայուն ճակատն էք թէ՛ դուք բիրաւվէր, ձիւնահեղ, Բայց մահուան դէմ՝ մի՛շտ խիզախ, բայց յաղթակա՛ն՝ մահէն վեր.

Պողպատ բոռննցքն էք հայու ճակատագրին դէմ նետուած, Եւ կրանիթ իր կա՛մքն էք եւ իր երա՛պն երկնասայց:

Յուշարձաններ էք հապար Վահագներուն հրեղէն, Որոնք ծնան ու սնան ձեր սիրապէղ արգանդէն. Եւ յաղթակով կոթողներն հերոսներուն անտապան՝ Որոնց կարմիր դափնիէն ձեր կանաչները բուսան:

Անքանդ գա՛հն էք կործանած արքաներուն հայկապուն... Եւ լուսածիր ձեր շղթան այն հորիզոնն է՛ որուն Ետեւ հայուն արեգակն ու յոյսը քուն չեն մտեր... - Մասիններէն մինչ՝ Տարուս, դո՛ւք, հայաբիւն ո՛վ լեռներ, Ողջ Պատմութի՛ւնն էք հայոց՝ անցեալ, ներկայ, ապագայ...

(«Մասիսածին»-1963)

Ժագ Յակոբեանի բանաստեղծութիւնները կը յատկանշուին անհատական ապրումներու, հայրենասիրական գեղումներու, ցեղային պաշտամունքի եւ զգացական թէ իմացական խռովքներու գունձարով մը: Ունի վարակիչ շունչ, ներշնչման թափ ու գեղեցիկ լեզու:

ՄԻՆԱՍ ԹԵՕԼԵՕԼԵԱՆ

(1956)

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ ԹՈՂ ԲԱՅ ՄՆԱՅ...

Սուրբ Գիրքը թող բա՛ց մնայ սենեակիդ մէջ տի ու ցայ՝ Ծաղկամանի պէս բուրեղ, որ իր ծաղկուն էջերէն Թորեն, բուրեն Աստուծոյ բառերը վարդ ու մեխակ եւ տունդ իրենց քաղցրութեամբ ու սրբութեամբ լեցնեն: Սուրբ Գիրքը թող բա՛ց մնայ սեղանիդ վրայ մշտօրէն՝ Խնկամանի պէս վառող, որ իր խօսքերը խնկուն եւ իր խոհերը խորունկ՝ տունդ խորան դարձնեն Ու երկնքի կապոյտով եւ անդորրով վայն լուն...

Միշտ բա՛ց մնայ սնարիդ՝ ճրագի պէս բոցաւել, Որ լուսեղէն իր բառերն ուղղեն ճամբէն Յիսուսի Յացգերը մութ ու մոլոր եւ ցերեկներդ ալ արեւ, Ու Տէրն ի՛նք քեզ քայլ առ քայլ եւ բիբ առ բիբ ուղեկցի...

Մօր գիրկի պէս՝ էջ առ էջ թող բա՛ց մնայ ան, տղա՛ս, Որ խոցերուն դէմ կեանքի եւ փորձութեանց մէջ իր բոց՝ Քու խոռվքներդ լալու սփոփավա՛յր մ'ունենաս, Եւ մեծ սիրոյ մը տեսիլքն՝ առեւտրեան դէմ մարդոց:

Թող բա՛ց ու լա՛յն միշտ մնայ՝ սեղանի պէս հացալի, Որ քեզ երաշտ չթողո՛ւ այս ճոխ աշխարհը, տղա՛ս, Օրուան խաչը կրելու ուժը սրտիդ չըպակսի՛, Չըհանգչի՛ յոյսն հասնելու լերան գագաթն երկնահաս...

Խոհերուն մէջ թէ գործքիդ՝ Սուրբ Գիրքը թող բա՛ց մնայ, Եւ հոգւոյդ մէջ միշտ ներկայ՝ ու կենդանի՝ մնայ թող, Որ անէն մէկ վայրկեանիդ, մէն մի քայլիդ, ճամբուդ վրայ, Կեանքիդ վերայ, մանա՛նայ առ մանա՛նայ, շո՛ղ առ շո՛ղ,

Օրհնութիւններ անձրեւէն բարի ձեռքէն Աստուծոյ...

(«Յիսուսաբոյր» - 1965)

ՍԻՐՏ ՄՐՏԻ

Ես վախ չունիմ, ո՛վ իմ Սէր, այն դաւադիր ձեռքէն, Որ մայերուն վրայ ձիւնէ պիտի մոխիր ձիւնեղէն, Ատոք մարմինըս կքէ շունչին ներքեւ իր քանդիչ Եւ տրոփներս երջանիկ պիտի խեղդէ քիչ առ քիչ:

Ես վախ չունիմ այն ցրտին վաղորդայնէն հեռակայ, Որ պատանքի պէս գիշեր պիտի փռէ կեանքիս վրայ. - Պիտի արեւը սիրոյդ զիս տաքցնէ՛ր տեսաբար, Սիրոյդ մայիսը ընդ միշտ պիտի պահէ՛ր զիս դալար:

Ի՛նչ փոյթ պզայ օրէ օր տխուր ցամքումը արեան, Չգալ մարմնին փրուպումն մութի մը տակ հաւաճան, Երբ իմ հոգիս քու սէրով պիտի մնայ մի՛շտ գարուն...

Ծերութեան ցուրտն ու ճանձրոյթն ու ձիւնն ի՛նչ փոյթ իմ հոգւոյն, Ի՛նչ փոյթ նոյնիսկ մահուան շունչն ու ոտնաձայնը գոժկան, Երբ ձեռքդ կայ ձեռքիս մէջ եւ երբ ամէն երկվայրկեան,

Մէն մի քայլիս, Սիրակա՛ն սիրտդ ունիմ սրտիս քով... («Ուլունքաշար» - 1983)

«Զգայութեանց նկարիչ» է նա եւ ուրեմն՝ յոյգերի: Մարդկային գաղափարները յոյգ թալկացում են եւ գունագրուած: Իր զգայութիւնները սակայն չափազանց թաղմ են, նուրբ ու գունագեղ, ուստի նա գաղափարներ չունի: Նա զգում է, ո՛չ թէ մտածում, ուստի իր պատկերները ծագում են խուռն ու ձոյլ, եւ ընթերցողին է մնում լուծել եւ գատորոշել:

ՆԿԿՈՒ ԱՂԲԱԼԵԱՆ

(1948)

ՏՂԵՐԲ...

Ի յուշ Արցախեան ապստամբարտիկներուն

Տղե՛րք, արցունք կը բերէք դուք մեր աչքերուն, Երբ ձեր կեանքի սոսնձը բորբ կը խաւարին Ու կը խամրին անգութ շունչէն փոթորիկին:

Տղե՛րք, արցունք կը բերէք դուք մեր սրտերուն, Երբ ձեր հասկերը՝ ոսկիի դեռ չփոխուած՝ Կը դառնան կե՛ր գերանդիին մարդահալած:

Երբ դաւադիր ծածքէ մը, ա՛հ, կը տապալիք, Դո՛ւք, Հայ Երկրի լեռնահասակ սիւնէ՛րը սէգ, Մեր կեանքերուն արցունք եւ սուգ դուք կը բերէք:

Մեր յոյսերուն վէրք կը բանաք դուք մահագոյն, Երբ երկնքէն, երդիքներէն մեր Արցախի վար կ'առնուին ձեր արեւներն՝ իբրեւ գերի:

Բայց մեր անուան կը հագնէք դուք փայլ ու փառք, Երբ լեռնէ լեռ՝ երեքբոցեան Դրօշն ի ձեռքին՝ Դուք կը ճախրէք ճակատելու Սատանային...

Դուք կը փչէք նաեւ կրակ մեր կուրծքերուն, Գնդակներէն՝ ձեր մարմիններն հապարբչիկ Երբ կը ցրուին ու կը ցանուին որպէս հատիկ...

Եւ կը ծնիք մեր հոգւոյն մէջ անյաղթ հաւա՛տք Հուսկ յաղթութեան, ձեր մահերն երբ դիցապական՝ Արշալոյսներ կը բանան մէջն Հայ Պատմութեան:

Լուսապակ ճակտո՛վ Տղաք, կը հաւատա՛նք, Անմեռ արեւա՛մբ ձեր դիեցող հողն հայրենի, Օրն Աստուծոյ, ԱԶՍԱՌԹԻՒՆ պիտի բուսնի

Դափնի պէս՝ արմատներէն պապենական... («Հինգ տարեկան մանչուկս այսօր...» - 2000)

ՏԵԼԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՇԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉ


ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



ՀԱՅ ԴԱՏ ԵՒ ՀԱՄԱՑԱՆՑ

ՌԻԶԸՐՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԵԿ ՅՕԴՈՒԱԾԸ ՀԱՄԱՑԱՆՑԻՆ ՎՐԱՅ



ԵՆՈՒ ՄԻ ԷՆ ԷՆ Համալսարանի Հայկական Ուսումնասիրությունները բաժանմունքի համացանցի կայքին մէջ տեղադրուած է Ռիչըրտ Յովհաննէսեանի «Համաշխարհային Առաջին Պատերազմը իբրև վնասող պահ» արդի հայոց պատմութեան մէջ» խորագրով ուսումնասիրությունը:

Ութ էջերով վրայ երկարող ուսումնասիրական այս յօդուածը Ռիչըրտ Յովհաննէսեան բանաստեղծութեան ձևով ներկայացուցած է 1991ին, Պէրլմանի մէջ տեղի ունեցած «Համաշխարհային Առաջին Պատերազմը արեւելեան Միջերկրկայանի երկիրներու յիշողութեան մէջ» թեմայով միջազգային համագումարին:

Հայտնի են նկատելով Համաշխարհային Ա. Պատերազմին ամենէն ցնցիչ կերպով ազդուած ժողովուրդը, Ռ. Յովհաննէսեան կը ներկայացնէ Հայկական Յեղասպանութեան ողբերգական դերը արդի հայոց պատմութեան մէջ, անդրադառնալով Յեղասպանութեան արհաւիրքը պարզ ժողովուրդի «թրոմա»ին, որ նաեւ փոխանցուած է յաջորդող սերունդներուն եւ ձեւաւորած՝ հայու աշխարհայայտացն ու հոգեվիճակը:

Ռ. Յովհաննէսեան «յիշողութեան բեռ» կը կոչ հայ ժողովուրդի գլխաւոր հասարակ յայտարարը կը նկատէ Հայկական Յեղասպանութիւնը, եզրակացնելով որ մինչեւ այն ատեն երբ ցեղասպանը կ'ուրանայ իր արարքը եւ հատուցում չի կատարեր, պատմութեան բեռը չի թեթեւանար եւ... անցելով կը մնայ ներկայ:

Ռ. Յովհաննէսեանի ուսումնասիրությունները ամբողջութեամբ կարդալու համար այցելել համացանցի հետեւեւել հասցէին՝

<http://www.sscnet.ucla.edu/history/centers/armenian/source108.html>

ՄԱՐԳԱՆԱԼՈՒ ՏԵՍԼԱԿԱՆՈՎ. «ՌՈՊՈԹ»ՆԵՐՈՒ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

1995ի տուեալներով, աշխարհի տարածքին, ճարտարարուեստի այլազան բնագաւառներու մէջ գործող «ռոպոթ»ներու (մարդամեքենայ) թիւը կը հասնէր 700,000ի: Անոնցմէ 500,000ը կը գտնուէր Ժափոնի մէջ, 120,000ը՝ Արեւմտեան Եւրոպայի եւ շուրջ 60,000ը՝ Միացեալ Նահանգներու մէջ: Այսօր, այս թիւը ոչ միայն բազմապատկուած է, այլեւ՝ մարդամեքենաներու պատրաստութեան արհեստագիտութիւնը՝ «ռոպոթիքս», արձանագրած է բազմաթիւ նոր նուաճումներ, մեքենայն աւելի եւս մօտեցնելով մարդուն, իսկ մարդը՝ մեքենային:

զանալ նաեւ մեքենաները «արեւստակա»ն իմաստութեամբ» (artificial intelligence) օժտելու գիտութիւնը: 1956ին, Նոպէլեան մրցանակակիր Հըրպըթ Սամըն եւ համակարգչային ծրագրումներու մասնագէտ Ալան Նիուըլ Փենսիլվանիոյ մէջ կը պատրաստեն մարդկային տրամաբանութիւնը կապող «Լոնիք Թեորիքս» ծրագիրը: Միեւնոյն տարին, Նիւ Հէմփշայըրի մէջ տեղի կ'ունենայ «արեւստակա»ն իմաստութեան» նուիրուած առաջին համագումարը, որ ներշնչում կը հանդիսանայ մասնագէտներու «ռոպոթ»ներու տրամաբանութեան, լեզուի հասկացողութեան եւ հաղորդակցութեան կարելիութիւններով օժտելու:



Կուելու եւ այլ նպատակներու համար:

Վերջերս, «ռոպոթ»ներ կը կատարեն նաեւ հեռակայ վիրաբուժական գործողութիւններ: Այս իմաստով յառաջիկայ տարիներուն սպասելի են մեծ յաջողութիւններ:

«Ռոպոթ»ներու օգտագործումը սակայն գործէ հանած է բազմազան պայտօնեաներ, որոնք նախապէս մարդամեքենաներու գործը կը կատարէին: Միւս կողմէ սակայն, աշխատանքային նոր կարելիութիւններ բացուած են «ռոպոթիքս»ի եւ համակարգչային գիտութիւններու բնագաւառին մէջ:

Յառաջիկայ տարիներուն յեղաշրջումներ կ'ակնկալուին «մալքրո-ռոպոթ»ներու արհեստագիտութեան մէջ: Քանի մը միլիոններ ծաւալով ինքնագործ «ռոպոթ»ներ պիտի կարենան արեւելեան երկրներու մէջ շարժելով խցումներ բանալ եւ կամ՝ հսկայ մեքենաներու մէջ «չըջելով» քննել անոնց աշխատանքի ընթացքը:

Սակայն, «ռոպոթ»ներու ամենէն ցնցիչ կարելիութիւնը տրամաբանութեան վերելքն է մարդուն համար մեծ յաջողութեամբ կապող «ռոպոթ»ներու մասին, սակայն անսպասելի չէ, որ օր մը՝ մտային աշխատանքներու կողքին, «ռոպոթ»ներ կարենան նաեւ մերիին նման յօդալ մոլորակներ ուղարկուել:



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

«Ռոպոթ» բառը յառաջացած է չեխերէս «ռոպոթ»էն, որ կը նշանակէ «պարտադիր աշխատանք»: Չեխ վիպագիր եւ թատերագիր Քարէլ Գալսեքեան է «ռոպոթ» բառը առաջին անգամ գործածողը, եւ այդ իր «Ռոսսըմը Եւրոպայի Ռոպոթ» (1921) թատերգութեան մէջ:

Ինքնագործ մեքենաներու պատմութիւնը սակայն շատ աւելի հին է: Շարժող սարքերու մասին առաջիններու եւ դիցապատմութեան կը հանդիպինք հարիւրաւոր տարիներ առաջ գոյուկտորներ փոխադրելու եւ քակրթութիւններու մէջ: Աւելի ուշ, իմաստասէրներու մօտ ձեւաւորուած է «Օթոմատ» տեղիները, որուն համար մեքենաներ կրնան կապել մարդկային շարժումները եւ նոյնիսկ... մտածել:


Կը պատմուի, թէ Բ. Ա. Յրդ դարուն, Չինաստանի «ՀԱՆ» հարստութեան կայսրերէն մէկուն համար կառուցուած է մեքենաներէ բաղկացող նուազախումբ մը: 13րդ դարու իմաստասէր Ռոնըր Պէլըն պատրաստած է «խօսող գլուխ» մը, իսկ 17րդ դարու իմաստասէր եւ թուաբանագէտ Ռենէ Ծէքարթ կառուցած է մարդամեքենայ մը՝ իր բեւ ճամբորդութիւններու ընկերակից: 18րդ եւ 19րդ դարուն պատրաստուած են մարդկային մկաններու շարժումներ կապող սարքեր: 20րդ դարուն, «մտածող» սարքեր պատրաստելու աշխատանքները թափ կը ստանան: Համակարգչային գիտութիւններու արձանագրած նուաճումներուն աւերթերը կը զար-

ՀԵՈՒՆԿԱՐՆԵՐ

«Ռոպոթ»ներու տրամաբանութեան եւ շրջապատը ուսումնասիրելով քակրթութիւններուն զուգահեռ՝ նոր զարգացումները դուռ կը բանան բազմաթիւ իրագործումներու: «Ռոպոթ»ներ կը սկսին օգտագործուել տարբեր ճարտարարուեստներու մէջ՝ կատարելով երբեմն օրինակ, իսկ երբեմն ալ՝ վտանգաւոր գործողութիւններ: Այսպէս, օրինակ, «ձեռնըլ Մորթր» ընկերութիւնը աւելի քան 20,000 «ռոպոթ»ներ կ'օգտագործէ սարքեր ներկելու, մեքենաներու կտորներ փոխադրելու եւ միացնելու համար: «Ռոպոթ»ներ կ'օգտագործուին նաեւ ընկղմած նաւերու տեղը ճշգրտել, կորիզային աղբեր մաքրելու, հրաբուխներու կապել մարդկային շարժումները եւ նոյնիսկ... մտածել:

ԱՐՇԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԱՆԹԵԼ ՀԱՍՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՐՈՊԱ ՄՈՒՏՔԸ




Անթել հաղորդակցութեան ցանցեր տրամադրող եւրոպական ընկերութիւններ վերջին տարիներուն նախանձով կը դառնին Ժափոնի մէջ համացանցային անթել հաղորդութեան որդեգրուած: Միլիոնաւոր ճափոնցիներ բըլղային հեռաձայններու միջոցով ե-նամակներ կ'ուղարկեն, շարժուն գծանկարներ կ'արձանագրեն եւ օդերեւութարանական լուրեր կը ստանան:

Այժմ, անթել սարքերու միջոցով համացանցի հաստատութիւն ունենալ կարելի պիտի ըլլայ նաեւ Եւրոպայի մէջ, ուր ճափոնական հաղորդակցութեան մեծագոյն ընկերութիւնը՝ «Տոքոմո», հրապարակ պիտի իջեցնէ իր գրութիւնը:

Յարգ յառ գրութիւնը որդեգրուած է Գերմանիոյ մէջ, իսկ յառաջիկայ ամիսներուն, «Տոքոմո» «Քէյ. Բի. Մոպայլ» ընկերութեան հետ գործակցաբար, գրութիւնը պիտի ներմուծէ Հոլանտա եւ Պելճիքա: Սեւային, մասնագէտներ վստահ չեն, եթէ «Տոքոմո» Եւրոպայի մէջ միեւնոյն յաջողութիւնը պիտի ունենայ: Արդարեւ, Ժափոնի մէջ 31 միլիոն բաժանորդներ ունեցող ընկերութիւնը թէեւ գործատէրերու մեծ կարելիութիւններ տուող գրութիւն մը պիտի տրամադրէ Եւրոպայի բաժանորդներուն, սակայն մասնագէտները դիտել կու տան, որ ճափոնցիները ընդհանրապէս խանդավառութեամբ կ'ողջունեն ելեկտրոնային «կաճիք»ները, մինչ եւրոպացիք կրնան աւելի «պաղարիւն» կեցուածք որդեգրել...:

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԸ



www.himnadram.org հասցէով կայքը ընդարձակ տեղեկութիւններ կը փոխանցէ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի գործունէութեան մասին: Անգլերէն եւ հայերէն լեզուներով հանրութեան ներկայացող այս կայքը կը ներկայացնէ հիմնադրամին 10ամեայ աշխատանքները, ծրագիրները, վարչական կառույցներն ու յանձնախմբային գործունէութիւնը:

Կայքին «ծրագիրներ» բաժինով կը ներկայացուին հիմնադրամին գործադրած, գործադրութեան ընթացքի մէջ եղող եւ ապագայի ծրագիրները՝ Հայաստանի եւ Արցախի գանազան շարունակուած մէջ: Այս բաժինին մէջ ծրագիրները զրօսակարգուած են ըստ բնագաւառի (տնտեսական, մշակութային, կրթական եւ այլն), եւ յատկացուած գումարներու:

Կայքին լուրերու բաժինը կ'ընդգրկէ հիմնադրամին ձեռնարկներուն, հանդիպումներուն եւ ժողովներուն լրատուութիւնները:


Յատուկ բաժիններ յատկացուած են բարերարներու եւ նուիրատուներու, ինչպէս նաեւ՝ հիմնադրամի դրասենեակներու հասցէներուն:

Կայքին միջոցով կարելի է նուիրատուութիւններ կատարել եւ կամ կապ հաստատել հիմնադրամին պատասխանատուներուն հետ:

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի ե-նամակի հասցէն է՝ info@himnadram.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԵՆԵԿԱՅԻՆ ՆՈՒԱԳԱՆՈՒՄԻՒՆ ԿԱՅՔԸ

Համացանցի www.ncoa.am հասցէով կայքին մէջ տեղադրուած են մանրամասն տեղեկութիւններ՝ Հայաստանի Ազգային Սենեկային նուազախումբի գործունէութեան մասին:



Համացանցի www.ncoa.am հասցէով կայքին մէջ տեղադրուած են մանրամասն տեղեկութիւններ՝ Հայաստանի Ազգային Սենեկային նուազախումբի գործունէութեան մասին: Կայքին լուրերու բաժինը տեղեկութիւններ կը փոխանցէ նուազախումբին յառաջիկայ ելույթներուն մասին: Պատմական բաժինով կարելի է կարգալ նուազախումբին տարիներու վաստակին մասին: Յատուկ բաժինով մը ներկայացուած են միջազգային եւ հայրենի մամուլի, ինչպէս նաեւ պետական անձնաւորութիւններու կարծիքներն ու տպաւորութիւնները նուազախումբին մասին:

Կայքին մէջ յատուկ բաժիններ տրամադրուած են նաեւ լուսանկարներու եւ «կապ»երու:

www.lemagan.com

ԶՄՄԱՌՈՒ ՏԻՐԱՄՈՐ ՎԱՆՔ
ԳՄՄԱՌ, ԸԵՈ. (09)262706 ԿԱՄ (09)262664
ԶՄՄԱՌՈՒ ՎԱՆԱԿԱՆ ԵՎԵՂԵՑԻՈՅ
ԿԻՐԱԿԵՐԵԱՅ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ
ԺԱՄԵՐԸ ՆՈՐ ԿԻՐԱԿԻՆ ՄԿՍԵԱԼ
(ՅԱՒԱԶԻԿԱՅ 7 ԱՊՐԻԼ 2002)
ՀԵՏԵՒԵԱԼՆԵՐՆ ԵՆ
08:00 Սուրբ պատարագ
09:00 Առաւօտ ժամերգութիւն
10:00 Սուրբ պատարագ
●11:00 2Ձյճաւոր Սուրբ պատարագ
19:00 Երեկոյեան ժամերգութիւն

ՏԱՐԵԴԱՐՁԻ ԼԱՒԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ
VIDEOԻ ԿԱՄ ՇՈՒ ՎՐԱՅ
VIDEO CLIPՆԵՐ
ԱՆՁԻՆ ԱՆՈՒՆՈՎ ԵՒ ՄԱԿԱՆՈՒՆՈՎ
Դիմել՝ ԱՐԱ ԶԵԷԷԷԱՆ ՀԱՍ.
ԸԵՈ. 01 / 261696, 03 / 250518

Պատրաստեց՝ Խ. ՍՈՒՐԱՏԵԱՆ

Մանկապատանեկան

ՔՈՆԿ ՖՈՒԻ ՊԶՏԻԿ ՉԻՆՈՒՈՐՆԵՐԸ

Չինաստանի չորս կողմերին տարեկան հարիւրաւոր աղջիկներ եւ մանչեր կը դիմեն Շաոլինի վանականներուն՝ քրոնկ ֆու սորվելու համար: Յայտագիրը ծանր է. մարզանք, մտախոհութիւն եւ շատ խիստ կարգապահութիւն:



Մարզումի շրջանը կը տեւէ երեք տարի: Հարկ է ունենալ կարգապահական որոշ յատկութիւններ, քաջութիւն եւ հնազանդութիւն: Նուազագոյն սխալին, աշակերտը մարզանքի կամ մարտարուեստի տուեալ ձեւը պէտք է կրկնէ տասնեակ անգամներ, մինչեւ որ զայն լաւապէս կատարելագործէ:



Վիճարանելու ժամանակ չկայ: 2000 աշակերտները միայն հինգ

աշակերտները իրենց ճաշերը կ'ուտեն ոտքի: Այս ձեւով անոնք կը սորվին իրենց մարմնին տիրապետել, լուսթեամբ տոկալ ու վկծկումներուն: Այս հանգրուաններէն պէտք է անցնիլ, որ մը քոնկ ֆուի ու-



վայրկեան ունին կարգի անցնելու, իրենց մկանները տաքցնելու եւ քաթանները ընելու համար:


փորձելու համար. իր գաւազանիկներով ան արագորէն պէտք է բանէ փոլիսքերէնի պատիկ կտորներ, որոնք բարակ բամպակէ թելերով կախուած կ'ըլլան:

Փորձելու յայտագիրին մաս կը կազմեն նաեւ սորվիլ ձեռքերը եւ ոտքերը շարժել յատուկ ձեւերով, ցատկել՝ վագրի նման արագ եւ վիշապին նման զօրաւոր ըլլալու համար:

Վանականները իրենց օրը կը սկսին իրենց գլուխները վար, ոտքերը պատին յենած: Ըստ իրենց ուսուցիչին, ասիկա լաւ մարզանք մըն է վիզի մկաններուն եւ արեան շրջապատութեան համար:

ՓՈՐՁԱԾ ԵՍ

ԵՐԳՈՂ ԳԱԻԱԹՆԵՐ



1) Գաւաթ մը դիր մեկանին վրայ եւ մատդ թրջէ ջուրով:



2) Մեղմօրէն մատդ անցուր գաւաթին բերանին շուրջ, միւս ձեռքով գաւաթին ոտքը բռնելով: Ձայն մը կ'ելլէ: Ուրեմն յաջողեցար:



3) Հիմա, գաւաթին մէջ քիչ մը ջուր դիր:



4) Մատդ անցուր գաւաթին բերանին վրայէն: Ձայնը աւելի թաւ է: Քանի մը փորձերէ ետք,

դուն պիտի կարենաս տարբեր ձայներ յառաջացնել:

ԻՆՉՊԷՍ

Մատդ ջուրին եւ ապակին հետ կապակցութեան մէջ մտնելով

ԶԱՅԱՍԱՆՆԵԱՅՅ ԵԿԵՂԵՅՈՅ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (ՀԵՀՈՍ)

ԴԱՍԱՆՕՍՈՒԹԻՒՆ

«The Mechanics of Motion Picture Industry»

Կը ներկայացնէ՝
ՊՐՆ. ՆԻԿՈԼ ՊԵՃՃԵԱՆ
(Բեմադրիչ եւ Future պատկերասփիւռի կայանի ֆիլմերու ցուցադրութեան բաժնի տնօրէն)

Տեղի կ'ունենայ այսօր՝ Շաբաթ, 6 Ապրիլ 2002ի երեկոյեան ժամը 6:30ին, ՀԵՀՈՍի կեդրոնատեղիին մէջ, Կաթողիկոսարան, Անթիլիաս:

ԿՐՆԱՍ

- 1) Տանդ մէջ շրջիլ, չորս ոտքով քալելով, ծունկերուդ վրայ, թուղթէ գնդակի մը վրայ փչելով:
- 2) Պիսրուի մը ուտել 15 վայրկեանէն (ոչ աւելի նուազ), առանց ծամելէ դադարելով:
- 3) Ձեռքերովդ դպչելով ճանչնալ, թէ ո՞վ պահուած է վարագոյրին ետեւը:
- 4) 21x29 սմ. կողմերով թուղթ մը շարունակ ծալել՝ մինչեւ, որ ան 1x1 սմ. մեծութիւն ունենայ:
- 5) Խաւաքարտէ պնակ մը ոտքովդ նետել եւ մինչեւ գլուխդ հասցնել:

ԱՅԼԱԶԱՆ

ԻՆՉՈՒ ԱՄՊԵՐԸ ԵՆԵՐՄԱԿ ԵՆ

Բոլոր ամպերը ճերմակ չեն:

Ամպը խտացած ջուրի շոգի է: Ան կաթի գոյն ունի, որովհետեւ յղկուած ապակիի նման արգելք կ'ըլլայ արեւուն լոյսին երկիր թափանցումին: Սակայն, երբ ան կը հաւաքէ մթնոլորտին մէջ գտնուող փոշիները, ան մոխրագոյն, սեւ կամ սուրճի գոյն կը ստանայ:



ՔԱՆԻՆ ԼԻԹՐ ԱՐԻԻՆ ՈՒՆԻՆՔ ՄԵՐ ՄԱՐՄՆԻՆ ՄԵՋ

4-5 լիթր:

Չափահաս մը ունի 4-5 լիթր արիւն իր մարմնին մէջ: Այս արիւնը անդադար կը շրջի մարմնին մէջ, անցնելով 96,000 քիլոմետր երկարութիւն ունեցող արեան երակներու մեծ ցանցէ մը:



ՔԱՆԻՆ ՏԱՐԵԿԱՆ Ե ԵՐԿՐԱԳՈՒՆԴԸ

4,6 միլիառ տարեկան: Երկրագունդը գրեթէ արեւուն, Փայծոռին, Արուսեակին, Հրատին, Լուսնիթաղին, Երեւակին, Ուրանոսին եւ Նեփթունին եւ պատիկ Պղատոնին տարիքը ունի:

Անոնք ծնած են նոյն ժամանակ, ելլելով ծեր աստղի մը թափած կազի եւ մնացորդներու նոյն խոզակէն:



Ո՞Ր ԵՐԿՐԻՆ ՄԵՋ ԾՆԱԾ Է ՓԻՆԿ - ՓՈՆԿԸ...

Անգլիոյ մէջ:

Փինկ - փոնկը (կամ մելանի թենիսը) ծնած է Անգլիոյ մէջ, մօտաւորապէս 1880 թուականներուն:

Գիտէ՞ր, թէ փինկ - փոնկի սեղանին չափերը շատ ճշգրիտ պէտք է ըլլան՝ 2,74 մ. երկայնք 1,52 մ. լայնք, յարգելով մինչեւ իսկ միլիմետրերը:

...ԻՍԿ Ո՞Վ ՀՆԱՐԱԾ Է ԹԵՆԻՍԸ

Անգլիացի մը:

Յոթութուրիսն եւ ուրիշ պիտի պէս, թենիսը հնարած է անգլիացի մը:

Անկէ առաջ, մարդիկ կը խաղային ափի խաղը, ձեռքերով գնդակի մը վրայ գարնելով:

Իսկ երբ ուսուցիչը կը յայտնուի, կը ստեղծուի թենիսը եւ ափերը վերջապէս կը հանգստանան:




ԻՆՉՈՒ ԶՂՁԻԿՆԵՐԸ ԿԸ ՎԱԽՆԱՆ ԱՐԵԻՒՆ

Անոնք կը նախընտրեն գիշերը:

Չղջիկները արեւէն չեն վախնար: Սակայն բնութիւնը գանոնք վերածած է գիշերային էակներու: Երբ արեւը կը սկսի ծագելու, անոնք կը վերջացնեն իրենց օրը... եւ իրենց կարգը կու գայ երթալ հանգչելու:

Ժ Ա Մ Ա Ն Յ



1 - 48 կետերը իրարու միացուր՝ գտնելու համար պահուած պատկերը:


Կրնա՞ս գտնել իրարու նմանող երկու տախտակները: Պատասխանը գտնելու համար կրնաս զանոնք շրջել:

X	O	O	O
O	X	X	O
X	O	X	X
O	O	O	O

X	O	O	O
X	O	O	O
X	O	O	X
X	O	O	O

O	X	O	X
O	O	X	O
O	O	X	O
O	X	O	O

O	X	X	X
X	O	O	O
O	X	O	O
X	X	O	O



Կրնա՞ս գտնել խորտակուած նաւուն գանձին հասցնող ձամբան:



Կրնա՞ս գտնել Մարալը: Ան տաբատ հագուած չէ, ո՞չ ալ ծաղկաւոր շապիկ ունի: Կը կրէ երկար կօշիկներ, սակայն գոհարեղն չի գործածեր: Մագերուն մէջ ժապաւէն մը դրած է:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն ԱՇԽԱՐՀ



ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹԳՈՒԼԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՎԱՂԸ ՊԵՐԺ - Հ. Մ. Ը. Մ.

Լիբանանի ֆուտբոլի ասոցիացիան 20րդ հանգրուանի մրցումներուն, վաղը՝ կիրակի Հ. Մ. Ը. Մ. ֆուտբոլի ներկայացուցական խումբը կը ճակատի Պերժի դէմ: Մրցումը տեղի պիտի ունենայ Սաֆայի դաշտին վրայ, ժամը 4:00ին:

Այս մրցումը Հ. Մ. Ը. Մ. ֆուտբոլի ըլլայ երրորդը՝ այս դաշտին վրայ, իսկ առաջինը՝ դարձի մրցումներուն: Առաջինին, Հ. Մ. Ը. Մ. 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց Սաֆայի հետ, իսկ երկրորդին՝ 3-2 արդիւնքով պարտուեցաւ Թատամն Սուրին:

Վաղուան մրցումէն, Հ. Մ. Ը. Մ. ֆուտբոլի բացակայի երկուսու յառաջապահ Փեթար Պաղիչ, որ անցեալ Զորեջըրթի օր Ահտի դէմ (Լիբանանի ֆուտբոլի բաժան) իր երրորդ դեղին քարտը ստանալով, մէկ մրցումով կախակալուած է: Բացակայ պիտի ըլլայ նաեւ այլ յառաջապահ մը՝ Մահմուտ Թահահան, որ մէկ ամիսով կախակալուած է:

Հակառակ անոր, որ Հ. Մ. Ը. Մ. ֆուտբոլի յարձակողականը այդ բացակայներով դաշտ պիտի ներկայանայ, սակայն կը սպասուի, որ խումբը եղանակի իր առաջին յաջածանակը արձանագրէ Սաֆայի դաշտին վրայ, իսկ երկրորդը՝ 2001-2002 եղանակին:

Ստորեւ՝ 20րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը:

ԱՅՍՕՐ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Հ. Մ. Մ. - Ռասիմկ	4:00ից	Պ. Համուտ
Շապալ Սահել - Ախա Ալեյ	4:00ից	Մ. Աւան
Սաֆա - Թատամն Սուր	4:45ից	Պէյրուբ

● **ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹԳՈՒԼԻ ՖԵՒԵՐԱՍԻՈՆԸ**, երկու օր առաջ իր գումարած ժողովին, վաւերացնելէ ետք Լիբանանի ֆուտբոլի բաժանի մրցաշարքին 1/32րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները, հրատարակեց 1/16րդ հանգրուանի յայտագիրը, որ տեղի կ'ունենայ հետեւեալ ձևով:

ՉՈՐԵՇՇԱՐԹԻ, 10 ԱՊՐԻԼ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Ռիատա Ուալ Ատալ - Ժատուտ Թրիփուի	3:30ից	Թրիփուի
Ահտ - Նահատա Պար Էլիաս	3:30ից	Պ. Համուտ
Հ. Մ. Մ. - Ռիատալ Պէյրուբ	3:30ից	Սաֆա

ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՕԲՍԷՆ - ԼԻՈՆ ՄՐՅՈՒՄԸ՝ 31ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ԳԱԳԱԹԻ ՃԱԿԱՏՈՒՄԸ

Ֆրանսայի ֆուտբոլի ասոցիացիան 31րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Լանս, որ այսօր պիտի հիւրընկալէ Թրուան (7րդ), իր ամէն կարելին պիտի ընէ երեք կէտ խլելու համար իր հիւրէն, տիտղոսին տիրանալու իր յոյսերը չկորսնցնելու համար:

Լանս, որ այժմ չորս կէտի առաւելութիւն մը ունի 2րդ դիրքը գրաւող Լիոնի վրայ, այս եղանակին ցարդ իր դաշտին վրայ պարտութիւն չէ կրած:

Շարժուան գագաթի ճակատումը սակայն տեղի պիտի ունենայ վաղը, ուր 3րդ դիրքը գրաւող Օքսէն պիտի հիւրընկալէ Լիոնը (2րդ): Հակառակ անոր, որ Լիոն այս եղանակին իր դաշտին վրայ կատարած մրցումներուն ընթացքին պարտութիւն չէ կրած, սակայն օտար դաշտերու վրայ անոր արձանագրած արդիւնքները այդքան ալ փայլուն չեն եղած: Անիկա 15 մրցումի ընթացքին կրած է ութ պարտութիւն:

9րդ դիրքը գրաւող Մարսէլ, որ տնտեսական մեծ տագնապի մատուած է, հիւրը պիտի ըլլայ Սոշոյի (8րդ):

Երեք կարեւոր խումբեր՝ Փարիզ Սէն Ժերմէն, Պորտո եւ Մոնպէ, որոնք իրենց մրցումները պիտի կատարեն իրենց դաշտերուն վրայ, պիտի փորձեն անպայման երեք կէտ խլել իրենց հիւրերէն:

Ստորեւ՝ 31րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէյրուբի ժամով):

ԱՅՍՕՐ	ԺԱՄ
Լանս - Թրուա	18:15ից
Փարիզ Ս. Ժ. - Նանթ	21:00ից
Պորտո - Պասքիա	21:00ից
Լորիան - Սքտան	21:00ից
Մոնպէ - Մէս	21:00ից
Մոնփելիէ - Կեկկան	21:00ից
Ռեյմս - Լիլ	21:00ից
Սոշո - Մարսէլ	21:00ից

ՎԱՂԸ	ԺԱՄ
Օքսէն - Լիոն	21:45ից

ՊԱՐՍԵՆՈՆԱՅԻ ՄԱՐԶԻՉԸ ԿԸ ԶՆԱԴԱՏԵ ՓԱՆԱԹԻՆԱՅՔՈՍԻ ԴԵՍ ՄՐՅՈՒՄԻՆ ԻՐԱԲԱՐԱՐԸ

Պարսելոնայի մարզիչ Բարոս Ռեքսաշ իր կազմին կրած պարտութենէն ետք (Փանաթինայքոսէն՝ 1-0 արդիւնքով) յայտնեց, թէ իր խումբը «գոհ» զնաց օրուան նորվեկիացի իրաւարարին՝ Թերթէ Հոկըի անարդար սուղիչին, որ ի նպաստ յունական կազմին չնորհած էր անարդար փենալթի մը:

«Ան գործեց շատ մը սխալներ, որոնք սուղ արժեքին մեզի: Իմ կարծիքով այդ մէկը փենալթի չէր», ըսաւ Ռեքսաշ:

Յաղթական խումբին մարզիչ Սերճիո Մարգարեան, սակայն, տարբեր կարծիք ունեցաւ, թէ եւ ան ըսաւ, թէ լաւ չէր տեսած կատարուած ֆաուլը:

«Իրականութեան մէջ՝ պատահածը չտեսայ: Սակայն ընդհանուր առմամբ կրնամ ըսել, որ օրուան իրաւարարը բաւական լաւ կատարեց իր պաշտօնը: Թէեւ ան մէկ կամ երկու սխալներ գործեց, բայց ընդհանուր առմամբ մրցումը կրցաւ լաւ ձեւով կատարել, ըսաւ Մարգարեան, որ նախապէս եղած էր Փարսելոնայի ֆուտբոլի ազգային խումբին մարզիչ:

Փանաթինայքոսի մէկ պատասխանատունը, երէկ Յունաստանի ֆուտբոլի ֆեդերասիոնին առաջարկեց, շարժապէս իր Յունաստանի ֆուտբոլի ասոցիացիան իր կատարելիք մրցումը (Իոնիքոսի դէմ) յետաձգէ, որպէսզի մարզիչները յապէս պատրաստուին Պարսելոնայի դէմ տեղի ունենալիք «Զեմփիլընգ Լիկ» ֆուտբոլի մրցաշարքին քառօրը աւարտականի դարձի մրցումին, որ տեղի պիտի ունենայ «Նուրամփ»ի մէջ: Ֆեդերասիոնը:



Սերճիո Մարգարեան (կեդրոնը) նր յայտնեց, թէ համաձայն գտնուած է այդ մէկին:

Ակումբին կողմէ կատարուած այս յայտարարութենէն օր մը առաջ, Յունաստանի ֆեդերասիոնը չորս մրցումով կախակալած էր Փանաթինայքոսը, յայտնելով, թէ անիկա իր դաշտին վրայ յաջող մրցումները պիտի կատարէ գոնե մէկ, առանց համակիրներու, արտաստուած թեան գծով իր մէկ մրցումին (Օլիմփիաքոսի դէմ) իր համակիրներուն կողմէ կատարուած վայրագութիւններուն պատճառով:

ՊԱՍԷԹՊՈՒԼ

ԱՆԻՊԱԼ - ՍԱԺԷՍ՝ 47-84

Լիբանանի պասթեպոլի տղոց Ա. դասակարգի արտաստուած կիսաարտակաւ հանգրուանի երկրորդ ճակատումին, երէկ Սաժես 84-47 արդիւնքով յաղթական վերադարձաւ Չաիլէէն, պարտութեան մատնելէ ետք Անիպալը: Կիսախաղ՝ 38-22, ի նպաստ՝ Սաժեսի:

Այժմ անոնց միջեւ արդիւնքը 1-1 է: Երրորդ հանդիպումը տեղի կ'ունենայ վաղը՝ Ղապիի մէջ:

Կիսաարտակաւ երկրորդ մրցումը՝ Ռիատի եւ Շանփիլի միջեւ այժմ կ'ընթանայ ի նպաստ առաջինին, 2-0 արդիւնքով: Երրորդ հանդիպումը տեղի կ'ունենայ այսօր:

ԱՆՎԵՐՅԱԿ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՅՍՕՐ՝ ԼՈՆՏՈՆՆԵԱՆ ՏԵՐՊԻՆ

Անգլիոյ ֆուտբոլի ասոցիացիան 34րդ հանգրուանի մրցումներուն, այսօր տեղի պիտի ունենայ յունաստանի տերպիլն՝ Արսենալի եւ Թոթեմհեմի միջեւ, առաջինին դաշտին «Հայպըրի»ի մէջ: Իր կատարած վերջին 14 մրցումներուն պարտութիւն չկրած Արսենալ, որ նուազագոյն պարտութիւն կրող խումբն է (երեք), այժմ մէկ կէտի առաւելութիւն մը ունի 2րդ դիրքը գրաւող Լիվըրպոլի վրայ, որ այս շաբաթավերջին մրցում չունի կատարելիք: Թոթեմհեմի (7րդ) պիտի բացակայի Լէս Ֆերտինանտ, որ վերջերս արկած մը ունենալով վիրաւորեց իր դաստակը: Ան մինչեւ այս եղանակին աւարտը դաշտ պիտի չկատարէ:

Ստորեւ՝ 34րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէյրուբի ժամով):

ԱՅՍՕՐ	ԺԱՄ
Լայպըր Սիթի - Մանչեսթըր Եւնայթըտ	14:00ից
Արսենալ - Թոթեմհեմ	17:00ից
Պոլքըն - Էփտուիչ	17:00ից
Չելսի - Էվերթըն	17:00ից
Միլուոլպոլ - Ասթոն Վիլա	17:00ից
Սաութհեմթըրըն - Տերպի Բաուքթի	17:00ից
Ուեսթ Համ - Չարլթըն	17:00ից

Հ.Մ.Ը.Մ. - ԼԵՎԱՍՍ ՊԱՍԷԹՊՈՒԼԻ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Վաղը՝ Կիրակի, Լ. եւ Ս. Յակոբեան քուլճի դաշտին վրայ տեղի կ'ունենան Հ.Մ.Ը.Մ. - Լեւասի յամոնախումբին կողմէ կազմակերպուած պասթեպոլի մրցումները՝ հետեւեալ յայտագիրին հիման վրայ:

Ս. Խանաթիքեան - Նուպարեան Խրիմեան (միջակ աղջիկներ) ժամը 1:00ից
Նուպարեան Խրիմեան - Գ. Կիլպէնկեան - Յառաջ (միջակ տղաք) ժամը 2:00ից
Ս. Հոնփսիմեանց - Գ. Կիլպէնկեան - Յառաջ (մեծ աղջիկներ) ժամը 3:00ից
Ս. Հոնփսիմեանց - Եղիշէ Մանուկեան (մեծ տղաք) ժամը 4:00ից
Ս. Հոնփսիմեանց - Ս. Ագնէ (միջակ տղաք) ժամը 5:00ից
Ճեմարան - Ս. Ագնէ (միջակ աղջիկներ) ժամը 6:00ից
Մեարդեան - Ճեմարան (մեծ տղաք) ժամը 7:00ից

ԱԼԵՔՍԱՆՏՐ ԲՈՎԱԼԵՆՔՕ՝ ՄԱՅԱՅԱԾ

1 Ապրիլի առաւօտեան գլխուղեղի կարծածով մահացաւ Հայաստանի «Արարատ» ֆուտբոլի խումբի «ուկէ կապ»ի կեդրոնական պաշտպան Ալեքսանտր Բովալենքո:

Ծագումով ուքրաինացի Բովալենքո մոտաւորապէս 16 տարի մաս կապած է Հայաստանի «Արարատ»ին, որ 1973ին դարձաւ նախկին Խորհրդային Միութեան ակումբի անդամակալ:

1993-1994 Բովալենքո եղած է Հայաստանի ազգային աւագակաւին ղեկավարը, իսկ 2002ի առաջին օրերէն սկսեալ ստանձնած էր Երեւանի «Սպարտակ-2» խումբին ղեկավարութիւնը:

ԸՄԲԵՍԱՄԱՐՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

Երէկ՝ Ուրբաթ, Երեւանի մէջ աւարտեցաւ Հայաստանի պատ ոճի ըմբշամարտի երիտասարդներու արտաստուած մրցաշարքը, տարբեր տեսակի դասակարգերու մէջ (տղաք եւ աղջիկներ):


Ստորեւ՝ արտաստուած հանդիսացած ըմբշները:

Տղաք. - Արա Համբարձումեան (50 քկ., Երեւան), Արմէն Կարապետեան (54 քկ., Արտաշատ), Լեոնիկ Հաւակիմեան (58 քկ., Երեւան), Սուրէն Մարկոսեան (63 քկ., Գառնի), Արթուր Ղապարեան (69 քկ., Արտաշատ), Բարսեւան Վարդանեան (76 քկ., Արտաշատ), Վահան Գրիգորեան (85 քկ., Գիւմրի), Յովհաննէս Մկրտչեան (97 քկ., Գիւմրի) եւ Տիգրան Մարտիրոսեան (120 քկ., Վանաձոր):

Աղջիկներ. - Ժաննա Վարդանեան (42 քկ., Արտաշատ), Անահիտ Մանուկեան (46 քկ., Գիւմրի), Մէրի Կարապետեան (50 քկ., Երեւան) եւ Լիլիթ Պողոսեան (54 քկ., Արտաշատ):


ՃԱՏՐԱԿ

1 ՏԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՄԱՂՍ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐԺՈՒՄՈՎ




ՄԻԵՋԻՍ Ե. - ԹՈՐԳՆԻՍԸՆ Պ. (2002)

2 ՏԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՄԱՂՍ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐԺՈՒՄՈՎ




ՎՈՒՈՒՊԵՎ Ս. - ՌԵՆԵՒԻ Ռ. (2002)

3 ՍԵՒԵՐԸ ԿԸ ՄԱՂՍ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐԺՈՒՄՈՎ



ՇԻՓՈՎ Ս. - ՇՄԱԼՔՈՎ Ռ. (2002)

4 ՏԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՄԱՂՍ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐԺՈՒՄՈՎ



ՄԵԹԱԵՍԱԶ Վ. - ՈՒՋԼԻՉ Վ. (2002)

Խնդիրներուն լուծումը տեսնել՝ 10րդ էջ

Այս սիւնակը պատրաստեց՝ Էլի Հուլիշեան

ԵՐՈՒՍԱԴՂԵՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱԼՈՒԲՆԵՐԸ ԿԸ ԳՏՆՈՒԻՆ...

Շարունակում 2րդ էջին

կալուածներուն նկատմամբ մեր բոլոր իրաւունքները յարգուած են եւ միշտ ալ կառավարութեան կողմէ ունեցած ենք որոշ երաշխաւորութիւն մը: Անցեալին փորձեր եղած են իւրացնելու թաղամաս մը, բայց այդ հարցը ներկայիս գոյութիւն չունի:

Սուրբ Յակոբայ վանքին շուրջ գտնուող թաղամասը Հայկական թաղամասն է, որ բաւական ընդարձակ է: Իսկ հայ կաթողիկէ համայնքին կալուածները կը գտնուին Յիսուսի խաչելութեան ճանապարհի երրորդ եւ չորրորդ կայաններուն վրայ: Եկեղեցին նորոգութեան մէջ է, որ սակայն նիւթական դժուարութիւններու պատճառով դանդաղ կ'ընթանայ:

Կրնանք ըսել, որ Հայկական կալուածները շատ լաւ վիճակի մէջ կը գտնուին: Վնասներ չեն արձանագրուած:

«ԱԶՏԱԿ».- Եթէ բաղադրանք անցեալի եւ ներկայի հայ գաղութին բուային պատկերը, ի՞նչ կրնանք ըսել այսօրուան մասին:

Գ.Ծ.Վ. ԽԱԶՈՒՄԵԱՆ.- Հայ գաղութին թուային պատկերը այսօր շատ ցաւալի է: Նոյնը կարելի է ըսել ընդհանրապէս քրիստոնեաներու մասին, որոնք իսրայէլի ամբողջ տարածքին վերածուած են աննշան փոքրամասնութեան: 1967ին քրիստոնեաներուն թիւը կը հաշուէր իսրայէլի բնակչութեան 60 առ հարիւրը, իսկ այսօր՝ միայն 6 առ հարիւրը: Այդ թուականին հայութեան թիւը հասած է մինչեւ քսան հազարի: Ներկայիս Երուսաղէմի մէջ քրիստոնեաներուն թիւը միայն երկու հազար է: Քաղաքին դուրս, Իսրայէլի եւ Պաղեստինի մէջ բոլոր քրիստոնեաները կը հաշուեն 16-17 հազար:

Այս թուային պատկերին մէջ հայ առաքելականները կը շնորհակալ շատուին 2000 հոգի, իսկ հայ կաթողիկէները՝ մօտ 100 ընտանիք:

«ԱԶՏԱԿ».- Ներկայիս ի՞նչ տարրոգութիւն ունի արտագաղթը: Զայն կասեցնելու միջոցներ կա՞ն:

Գ.Ծ.Վ. ԽԱԶՈՒՄԵԱՆ.- Երուսաղէմի հայ համայնքին սպառնացող ամէնէն մեծ վտանգը արտագաղթն է, որ ժամանակին տեղի ունեցած է շատ մեծ տարողութեամբ: Պէտք է ձեռնով մը առաջը առնել վտանգին, որովհետեւ քրիստոնեաներուն Երուսաղէմէն հեռացումը նաեւ միջազգային երեւոյթ է եւ կը շահագրգռէ զանազան կողմեր: Արտագաղթը կասեցնելը շատ դժուար է, որովհետեւ նախ եւ առաջ պէտք է տիրէ խաղաղութիւն, դադրին բախումները եւ հատատուի ներքին խաղաղութիւն, որպէսզի կեանքը վերսկսի իր բնական թափով:

«ԱԶՏԱԿ».- Ի՞նչն է, որ մնացած փոքրաթիւ հայերը կառչած կը պահէ Երուսաղէմին:

Գ.Ծ.Վ. ԽԱԶՈՒՄԵԱՆ.- Երուսաղէմը գրաւելը քաղաք մըն է, այդ պատճառով է, որ յատկապէս երէց սերունդը, համառակ բազմապիսի դժուարութիւններու, կը նախընտրէ հոն մնալ:

«ԱԶՏԱԿ».- Նոր սերունդին մասին երկու խօսք:

Գ.Ծ.Վ. ԽԱԶՈՒՄԵԱՆ.- Թէեւ Երուսաղէմի հայ գաղութին մեծամասնութիւնը կը պատկանի տարեց սերունդին, բայցեւայնպէս կան երիտասարդներ, որոնք կը համախմբուին ակումբներու եւ միութիւններու շուրջ: Այս օրերուն մեծ պատրաստութիւններ կը տեսնուին հայկական եւ պետական մակարդակի վրայ նշելու համար Ապրիլեան սպասօրը:

«ԱԶՏԱԿ».- Պաղեստինեւիսրայէլեան տագնապին առնչութեամբ գոյութիւն ունեցող միջեկեղեցական դիրքորոշման մէջ ի՞նչ է հայ համայնքին դերը:

Գ.Ծ.Վ. ԽԱԶՈՒՄԵԱՆ.- Երուսաղէմի միջեկեղեցական գործունէութեան մէջ հայ եկեղեցին ունի իր կարեւոր մասնակցութիւնը: Հայ համայնքը իր կեցածքը կը համադրէ այլ եկեղեցիներու հետ:

ԹՐՔԱԿԱՆ ԿՈՂՄԸ ԿԸ ԽԱՓԱՆԷ...

Շարունակում Ա. էջին

է, թէ Ե. Միութեան ընդարձակման ամբողջ գործընթացը պիտի կասեցնէ, եթէ Կիպրոս, որ անտեսապէս ամէնէն լաւ պատրաստուած թեկնածուն է, քաղաքական պատճառներով դուրս ձգուի անդամներու առաջին խմբակէն:

Վերհէօկըն, որ կը խօսէր կեղծոյնի աջ Եւրոպական ժողովուրդի կուսակցութեան մէջ համագումարին, մեծ կարեւորութիւն չէ ընծայած այդ սպառնալիքին:

Ան յայտնած է, որ յստակ է, թէ յունական կողմը «դրական եւ շինիչ մօտեցում մը կը ցուցաբերէ գործընթացին հանդէպ»:

Վերհէօկըն դիտել տուած է նաեւ, որ բնաւ պիտի չզարմանայ, եթէ Թուրքիա յանկարծ Կիպրոսի բանակցութիւններուն ընթացքը «չարժէ»:

«Թուրքիա ձեռով մը նախկին խորհրդային Միութեան նման կը բանակցի. ամիսներով եւ տարիներով ոչինչ կը պատահի եւ յանկարծ՝ մէկ օրուան մէջ անկիւնադարձային որոշում մը կը կայացուի», բացատրած է ան:

ՄԱԿի Կիպրոսի հարցերու պատասխանատու յատուկ պատուիրակ Ալվարո տէ Սոթո Հինգլարթի օր Ապահովութեան խորհուրդին յայտնած է, թէ հակառակ բնակցութեանը դանդաղ ընթացքին, տակաւին կարելիութիւնը կայ Յունիսի ժամկէտը յարգելու, ինչ կը վերաբերի համաձայնութեան մը գոյացման:

Վերհէօկըն սակայն նուազ լաւատես էր այդ գծով: Ա. խորհուրդի անդամները, ալ Սոթոյի դռնփակ գեկուցումէն ետք, հաղորդագրութեան մը մէջ մտահոգութիւն արտայայտած են, թէ «յաւազմութիւնը դանդաղ է, եւ թէ տակաւին ընելիք շատ բան կայ մինչեւ Յունիսի ժամկէտը»:

չի կար իսրայէլի կեցուածքէն, դիտել տալով, որ եւրոպացի պատուիրակները գիտէին, թէ որպէս մը կ'առնէն, եւ թէ Արաֆատի հետ տեսակցութիւնը երաշխաւորուած չէ: Եւրոպացի այլ դիւանագետներ ըսին, որ Սոլանայի առաքելութեան նպատակներէն մէկն էր ամերիկեան աւելի աշխուժ ու գործօն դերակատարութիւն մը ապահովել Միջին Արեւելքի մէջ: Փաստօրէն, Պուշի յայտարարութիւնը իրագործեց այդ նպատակը, աւելցուցին դիւանագետները: Անոնք ըսին նաեւ, որ եւրոպական քննադատութիւնը Ուաշինկթընի, Սոլանայի եւ Փառլըյի միջեւ հեռաձայնային հաղորդակցութիւնները, Բրիտանիոյ վարչապետ Թոնի Բլէրի կողմէրը եւ Եւրոպական Միութեան կողմէ պատուիրակներու առաքումը ճնշումի միջոցներու վերածուցան պատճառ դառնալով, որ Պուշ որոշում տայ աշխուժ դերակատարութիւն ունենալու Միջին Արեւելքի մէջ:

ԱՐԱՔՆԵՐԸ ԹԷ ԼԱԻ, ԹԷ ՊԵ ԿԸ ՆԿԱՏԵՆ ՊՈՒՇԻ ԽՕՍՔԸ

Արաք պաշտօնատարներ ողջունեցին Ուաշինկթընի ճիգերուն վերաշխուժացումը շրջանին մէջ: Սակայն մեկնաբաններ դատարար տեղիին Պուշի խիստ ու դառն խօսքերը Արաֆատի դէմ:

Կարգ մը արաք մեկնաբաններ ըսին, որ արգելափակումը Արաֆատը մեղադրելով ու վայրագութեան ալիքին պատասխանատուութիւնը անոր ուսերուն բեռնելով՝ Պուշ կանայ լոյս տուած կ'ըլլայ Շարունի՝ կամ արտաքսելու, կամ սպաննելու Արաֆատը:

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԶԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Հինգշաբթիէն Ուրբաթ օր լուսնոյ գիշերուան ընթացքին տեղի ունեցած բախումներուն սպանուեցան աւելի քան 13 պաղեստինցիներ: Բերդեհէմի մէջ եւ Զեբայոն պայթումները շարունակուեցան, մինչ Բերդեհէմի Ս. Օննդեան եկեղեցու մէջ պաշարուած կը մնան երկու հարիւր պաղեստինցիներ: Ամէնէն պօրաւոր կոիր տեղի ունեցաւ Նապլուսի մէջ, ուր սպանուեցան ութ պաղեստինցիներ եւ իսրայէլացիներ 24



Արաք իսրայէլացի երիտասարդներ կը քարկոծեն իսրայէլացի զինուորներ Ումէլ Ֆահմ քաղաքին մէջ:

նպատակով իսրայէլի դիրքորոշում էր: Սակայն Մուսա համաձայն չէ Պուշի տեղի, Բրիտանիոյ վարչապետ Թոնի Բլէրի կողմէ Եւրոպական Միութեան կողմէ պատուիրակներու առաքումը ճնշումի միջոցներու վերածուցան պատճառ դառնալով, որ Պուշ որոշում տայ աշխուժ դերակատարութիւն ունենալու Միջին Արեւելքի մէջ:

Յորդանանի վարչապետ Ալի Ապու Ռադէպ ըսաւ, որ ամերիկեան ուղղակի դերակատարութիւնը դրական քայլ մըն է՝ շրջանը յուլող տագնապը լուծելու ճամբուն վրայ: Ապու Ռադէպ աւելցուց, որ Արաֆատի արգելափակումը պէտք է քննուի:

Սուրիա քննադատեց Պուշի ճառը: Զայնասափուի կայանին մէկ խմբագրականը յայտնեց, որ Ուաշինկթընը կողմ է դադարը կը նշանակէ:

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԶԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Հինգշաբթիէն Ուրբաթ օր լուսնոյ գիշերուան ընթացքին տեղի ունեցած բախումներուն սպանուեցան աւելի քան 13 պաղեստինցիներ: Բերդեհէմի մէջ եւ Զեբայոն պայթումները շարունակուեցան, մինչ Բերդեհէմի Ս. Օննդեան եկեղեցու մէջ պաշարուած կը մնան երկու հարիւր պաղեստինցիներ: Ամէնէն պօրաւոր կոիր տեղի ունեցաւ Նապլուսի մէջ, ուր սպանուեցան ութ պաղեստինցիներ եւ իսրայէլացիներ 24

ուրիշներ: Հայրոնի մէջ ալ վիրաւորուեցաւ 11 հոգի: Յոյն Ուղղափառ եկեղեցին կոչ ուղղեց Իսրայէլի Ս. Օննդեան եկեղեցին ներխուժելու փորձ մը չկատարել, որովհետեւ այդ



Պաղեստինցի մանուկ մը կը դիտէ իսրայէլացի զինուոր մը Երուսաղէմի Կը Քաղաքին մէջ:

պիսի քայլ մը «սահաւոր սպանող» մը կրնայ պատճառել: Եկեղեցիին մէջ «բանտարկուած» վանականներ կարիք ունին սննդանիւթի, որ սպառելու մօտեցած է իսրայէլացի կաթողիկէ կրօնաւոր մը, որ դիտել տուաւ սակայն, թէ վանականները եկեղեցիէն դուրս պիտի չգան, որպէսզի իրենց ներկայութեամբ փորձեն կանխարգիլել պաղեստինցիներուն եւ իսրայէլացիներուն միջեւ արհեստականութիւնը:

ԹՈՒՐԵԱ ԿՈՂՄԸ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԾԻՂԵՐԸ

Թուրքիոյ վարչապետ Պիլիք Էճեւիթ, որ Հինգշաբթի օր իբրեւ ցեղասպան դատարար տեղի ունեցած Երուսաղէմի զոհերու հարգումը, երկու ողջունեց Պուշի խաղաղարար ճիգերն ու յայտարարեց, որ իսրայէլացիները կ'արժանանան իրենց արժանապատեանը: Միւս կողմէ, իսրայէլեան ուժերը շարունակեցին իրենց արարածը: Պուշի խաղաղարար ճիգերն ու յայտարարեց, որ իսրայէլացիները կ'արժանանան իրենց արժանապատեանը: Եճեւիթ ըսաւ, որ ամերիկեան միջնորդութիւնը կենսական է, լուծելու համար տագնապը: Խօսելով ցեղասպանութեան մասին կատարած իր յայտարարութեան մասին, Էճեւիթ ըսաւ, որ իր յայտարարութեամբ ինք չէր դատաւարտել իսրայէլացի ժողովուրդը, այլ՝ անոր ներկայ ղեկավարութեան արարքները: Էճեւիթ ընդգծեց, որ Թուրքիա կը շարունակէ մեծ կարեւորութիւն տալ Իսրայէլի հետ իր կապերուն, թէ իր յայտարարութիւնը կրնայ ներա-

ւրիշներ: Հայրոնի մէջ ալ վիրաւորուեցաւ 11 հոգի: Յոյն Ուղղափառ եկեղեցին կոչ ուղղեց Իսրայէլի Ս. Օննդեան եկեղեցին ներխուժելու փորձ մը չկատարել, որովհետեւ այդ

պիսի քայլ մը «սահաւոր սպանող» մը կրնայ պատճառել: Եկեղեցիին մէջ «բանտարկուած» վանականներ կարիք ունին սննդանիւթի, որ սպառելու մօտեցած է իսրայէլացի կաթողիկէ կրօնաւոր մը, որ դիտել տուաւ սակայն, թէ վանականները եկեղեցիէն դուրս պիտի չգան, որպէսզի իրենց ներկայութեամբ փորձեն կանխարգիլել պաղեստինցիներուն եւ իսրայէլացիներուն միջեւ արհեստականութիւնը:

Միւս կողմէ, երկ իսլամական ու արաբական երկիրներուն մէջ շարունակուեցան Իսրայէլի դատաւարտող ցոյցերը:

Պահրէյի մէջ, հապարաւոր ցոյցարարներ քարեր ու հրձիգ ռումբեր նետեցին ամերիկեան դեսպանատան շէնքերուն վրայ: Ուտիկանու թիւրքաբախում ունեցաւ ցուցարարներուն հետ, զորս կը փորձէր ցրուել:

Գահիրէի Ալիար մկիթին շրջափակեաներ ստատարապէս հինգ հազար իսլամներ բողոքի ցոյց մը կատարեցին Իսրայէլի դէմ՝ այրելով իսրայէլեան դրօշակը, եւ ի նպատակ պաղեստինցիներուն յայտարարութիւններ կատարելով:

Ամմանի մէջ, ոստիկանութիւնը ջրարձակ եւ արցունքաքեր ռումբեր արձակեց ցրուելու համար աւելի քան վեց հազար ցոյցարարներ, որոնք հաւաքուած էին Քալուսի մկիթին մէջ եւ շուրջ: Բողոքի փոքր ցոյց մը տեղի ունեցաւ նաեւ Սէուտական Արաբիոյ մէջ, հակառակ անոր, որ սէուտական իշխանութիւնները արգիլած են ցոյցերը: Ցոյցեր տեղի ունեցան նաեւ Ինտոնեզիոյ եւ Պանկլատէի մէջ: (ՌՈՅԹԸՐԸ)

ԶՄՐԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐՈՒՆ ԼՈՒՅՈՒՄԸ

- 1. 1.Յg8+ զh6 2.Ձe3# 1-0
2. 1.Ձd7+ զxd7 2.Պg8# 1-0
3. 1...Պf1+ 2.Փc2 Պc1# 0-1
4. 1.է4+ զh6 2.էh7# 1-0